

63
4-68



ԱՐԴՅՈՒՆՎՈՐԻ ՀԵՐԱԿԱՆ ԽՈՐԱԳԻՈՒԹԻՒՆ

Справочная книга
по

СЕЛЬСКОМУ ХОЗЯЙСТВУ



ԳԻՂԱՏՆՏԵՍԻԿԱՆ

ՏԵՂԱԿԱՇՈՒՐ

Առևտունություն

300 է 30 գր.

ТИФЛИСЪ

Электропечатня «Экономія», Тифлисъ В.-Ванкская ул. № 3.
1911

К В Е Е С Ъ и К°

спытанныя сельско-хозяйственные, огородные и цветочные
семена для посева. Иллюстрированные Прейс-Куранты
высылаются бесплатно.




Адресъ для писемъ: К В Е Е С Ъ и К°
гор. ТИФЛИСЪ, Михайловский проспектъ
уголъ Семеновской ул.



63
9-68

20 MAR 2013

04 AUG 2010



Հայոց տեղանում Թիֆլիսում շաբաթը մի անգամ

«ԳԻՒԱՏԵՆԵՍ»-ը ունի գիւղատնտեսական ամեն ճիւղերի համար մասնագետ աշխատակիցների ու ծեղացրած կազմ:

«ԳԻՒԱՏԵՆԵՍ»-ը հայոց մէջ միակ գիւղատնտեսական շաբաթը է:

«ԳԻՒԱՏԵՆԵՍ»-ը հայոց գիւղացիութեան և գիւղատնտեսութեամբ զբարապոների համար եղել է անցեալ երկու տարվաներու միտք թերթը, որից ընթերցողները քաղել են գիւղատնտեսական զանազան ճիւղերին վերաբերեալ զդունական խորհուրդներ և ցուցմունքներ:

«ԳԻՒԱՏԵՆԵՍ»-ը աշքի առաջ ունի ոչ միայն Ռուսական առաջնում՝ Կովկասում և Անդրկովկասում ապրողների գիւղատնտեսական կարիքները, այլ և Ցամկանայատների, Պարսկաստանի և Անդրկասպեան երկրի:

ԲԱԺԿԵԴՐԻՆԸ

Առուսաստանում
Տարեկան 3 ր.
Կէս տարիին 2 ր.


Հայոց Տիֆլիս—Ռեդակցիոն ՝ ՊՈԽԱԹԻՆԵՍ

Արտասահմանում
Տարեկան 4 ր.
Կէս տար. 2. 50 կ.

63 սր
9-68

Հրատարակութիւն «ԳԻՒԱՏԵՆԵՍ» տարաբարերի.

630 Справочная Книга
22-ԳԻ
ПО
Сельскому Жозяйству



10613

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՅՐԿՐԱԴՈՐՆՈՒԹԻՒՆ, ԽՈՏԱԲՈՒՆՈՒԹԻՒՆ, ՊԱՐՅԻՉՎԱՆՈՒԹԻՒՆ, ԱՆ-
ԱՌԱՋԱՎԱՀՈՒԹԻՒՆ, (ԿԱՐԱՑԱՏԵԱՍՈՒԹԻՒՆ) եւ ՄԵՂԻԱԲՈՒՆՈՒԹԻՒՆ:

Պատկերազարդ

ԳԻՆՆ է 30 կ.



1911 թ.

Электропечаня „Экономія“, Тифлісъ Б.-Ванкская 3.

ՄԻՀՆՈՐԴ ԲԻՒՐՈ

„ԳԻՒՂԱՏՆՏԵՍ“

«Գիւղատնտես» շաբաթաթերթի խմբագրութեան կից կազմւած է մասնագէտների Բիւրօ,
որը ՅԱՆՁՆ Է ԱՌԱԽԻՄ

1) Բերել տալ Գիւղատնտեսական ամեն տեսակ մեքենաներ և գործիքներ Արտառահմանի և Ռուսաստանի առաջնակարգ գործարաններից:

2) Կազմում է կալւածների և տնտեսութիւնների համար՝ պլաններ, յատակագծեր, նախահաշիւններ և այլն:

3) Դնում է ջրհան մեքենաներ՝ քամու, ջրի և մնքենայական ուրիշ ոյժերով:

4) Ոռոգում է անջրդի հողեր՝ գիտութեանը յայտնի տեխնիքական բոլոր միջոցներով

5) Հետազոտում է՝ հողեր, կալւածքներ, անտառներ, և հանքեր:

6) Տակիս է գիւղատնտեսական ամեն ճիւղերից խորհուրդներ և ցուցմունքներ:

Պայմանների մասին դիմել Բիւրօյին հետեւալ հասցեով՝ գ. Տիֆլիս։ Եղ րедакցիոն «ԳՅՈՒԹԱՆՑ» Միջնորդ Բիւրօյին։

Ա Ռ Ե Զ Ա Բ Ա Ն

«Գիւղատնտես»-ի խմբագրութիւնը ցանկանալով իր բաժանորդներին և գիւղատնտեսութեամբ պարագող անձանց գիւղատնտեսական զանազան ճիւղերից կարեոր և ամփոփ տեղեկութիւններ ու ցուցմունքներ տալ, այս տարւանից սկսում է հրատարակել իր Տեղեկատոի առաջին մասը, իսկ հետեւալ մասերը, որոնք ամփոփելու են գիւղատնտեսական միւս ճիւղերը, ոյս կտեսնեն 1912 և հետեւալ տարիներում։

Աչքի առաջ ունենալով, որ սա առաջին փորձն է հայերիս մէջ այսպիսի մի հրատարակութեան, յոյս ունենք հետեւալ մասերը անել աւելի լրիւ, մասաւանդ Անդրկովկասին վերաբերեալ տեղեկութիւնները։

Խմբագր. «Եկամանական գույք»

ՏՈՒՏԱԿ ՕՐԱՑՈՅՑ 1911 ԹԻՒ

	ՅՈՒՆԻՎ	ԳՐԱՄ	Մ. Տ. Տ
	Ա. Պ. Ի. Լ	Մ Յ Ա	Յ Ո Ւ Ն Ի Ս
	Յ Ո Լ Կ Բ Ս	Օ Ր Ա Ս Տ Ո Ւ Ծ	Մ Ե Պ Տ Բ Բ Ե Ր
Կիւրակէ	2 9 16 23 30	6 13 0 27	6 13 20 27
Երկուշաբ.	3 10 17 24 31	7 14 21 28	7 14 21 28
Երեքշաբ.	4 11 18 25 —	1 8 15 22 —	1 8 15 22 29
Չորեքշաբ.	5 12 19 26 —	2 9 16 23 —	2 9 16 23 30
Հինգշաբ.	6 13 20 27 —	3 10 17 24 —	3 10 17 24 31
Ուրբաթ	7 14 21 28 —	4 11 18 25 —	4 11 18 25 —
Ճարաթ	8 15 22 29 —	5 12 19 26 —	5 12 19 26 —
Կիւրակէ	3 10 17 24 —	1 8 15 22 29	5 12 19 26
Երկուշաբ.	4 11 18 25 —	2 9 16 23 30	6 13 20 27
Երեքշաբ.	5 12 19 26 —	3 10 17 24 31	7 14 21 28
Չորեքշաբ.	6 13 20 27 —	4 11 18 25 —	1 8 15 22 29
Հինգշաբ.	7 14 21 28 —	5 12 19 26 —	2 9 16 23 30
Ուրբաթ	8 15 22 29 —	6 13 20 27 —	3 10 17 24 —
Ճարաթ	9 16 23 30 —	7 14 21 28 —	4 11 18 25 —
Կիւրակէ	3 10 17 24 31	7 14 21 28	4 11 18 25
Երկուշաբ.	4 11 18 25 —	1 8 15 22 29	5 12 19 26
Երեքշաբ.	5 12 19 26 —	2 9 16 23 30	6 13 20 27
Չորեքշաբ.	6 13 20 27 —	3 10 17 24 31	7 14 21 28
Հինգշաբ.	7 14 21 28 —	4 11 18 25 —	1 8 15 22 29
Ուրբաթ	8 15 22 29 —	5 12 19 26 —	2 9 16 23 30
Ճարաթ	9 16 23 30 —	6 13 20 27 —	3 10 17 24 —
Կիւրակէ	2 9 16 3 30	6 13 20 27	4 11 18 25
Երկուշաբ.	3 10 17 24 31	7 14 21 28	5 12 19 26
Երեքշաբ.	4 11 18 25 —	1 8 15 22 29	6 13 20 27
Չորեքշաբ.	5 12 19 26 —	2 9 16 23 30	7 14 21 28
Հինգշաբ.	6 13 20 27 —	3 10 17 24 —	1 8 15 22 29
Ուրբաթ	7 14 21 28 —	4 11 18 25 —	2 9 16 23 30
Ճարաթ	8 15 22 29 —	5 12 19 26 —	3 10 17 24 —

Նկատ: Հաստ թւանշաններով տպածները կիրակի, Կայսերական և:
Պետական, եկեղեցական տօներն են:

Պ. Ե. ՊՐԵՍՈՒՐ

(Թիֆլուս) ԾԱԽՈՒՄ ԵՎ՝

ԲՈՅԱՌՈՒ ԲԵՇԿՈՒԹԵԱՆ ԴՐԵԲ 1) ՑԱՏԿԱՎԿԱ՝ ԲԱՄԲԱԿԻ ԽԱ
ԽԱՊԼՈՅԻ «ՀՅԱ» Բ. ԱՆԴՐԱՌԻԱՆ ԽԱՆԱՐ ՏԱԺԱՐ ԾՈԲՐԱԿԻ 2) ՊԱՌ-
ՃՐ ԱՐՀԱՆԱԿ, 3) ՊԱՐԵ ՊԻԱՆ ԿԱՆԱԶ 4) ԱԼՄԱՆԱԿ ԿԻՇԻ. «ԵԿԵԼԵՐ»,
5) ԾԻՄԱԿ ԱՐԵ ԷՐԱԿԱԿԱԿԻ,


ԾԱԲԵՐԻ ԲԾԵՐՈՒԹԵԱՅ, ԳՈՐԾԻՔԱԵՐ 1) ՎԵՐՄՈՒԵՐ և ԱՄԲ
ԿՐԵՋԱՐԱՆՆԵՐԻ ԱՐԱԿԻ ՀԱՆԵՐ, 2) ՓԱՐԵՍԵՐ, 3) ՏՈՐՊԻ ՀԱՆԵՐ,
ՍԵ ՄԵՐԻ 1) ԱԼԵՐՅՈՒԲ (ԽՈՆՁԻ) ԳԻՐԱՆՍԻԱԼԱՆ ԱՄԲՆԱՐՆՈՒՐ ՄԵ-
ԱՆԻ/, 2) ԵՐԵՎԱՆՈՒԲ՝ ԿԱՐԱԲԻՐ
ՊԱՐԱՐՏԱԿՆԵՐԻ. 1) ԶԵՐ Բ Բ Բ Ա Լ, 2) ՄՈՆԱԿԻ ՓՈԽՓԱՄ, 3)

ԹՐԱՄԱՄ ՀԱԿԻ:

ԳԻՅԵՎՐՈՒԹԵԱՆ, ԱՂՋԻԿԱՋՈՒԹԵԱՆ և ԳԻՎԱՐԱՍԻՏԵԱԿԱԿԱՆ ԱՄԵՆ
ՏԵԱԿ ԿԱՐԺԻԲԵՐ, և ՄԵՐԵԿ ԱՆԵՐ, և ԱՅԼԻՆ,


ՊԵՐԱՏԱ ԾԱՆԵՐ՝ պատուաստած, ամենալուսիր տեսակների.

ՀԱՄԵԼԻ ԽԱՆՈՒՆԻՐԻ, ՏԵՍԱԳԻՐՆԻՐԻ ՀԱՄԱՐ— Տիֆլոս, Մ. Ե. ՊՐԻԼՈՆՈՎՈՒ



և արդիւնաբերական ցուցահանդէսներում – Կովկասում և Խուսաստանում
ՊԱՐԳԵՒԱՏՐԻԱԾ է 15 ՀԱՏ ԲՐՈՆԶԵԱՅ, ԱՐԾԱԹԵԱՅ
ԵՒ ՈՍԿԵԱՅ ՄԵԴԱԼՆԵՐՈՎ

Կ. Թ. ԱՓՐԻԿԵԱՆԻ



Այգերուծական տնտեսութիւնը առաջարկում է խնձորենի, տանձենիքի, դեղձի, ծիրանու, կեռասենու, սալորու և այլ պտուղների 1 և 2 տարեկան ծառեր՝ արտասահմանեան ամենալարնդիր տեսակներից, պատրաստած վայրի տունկերի վրայ և թրզուկ (կարճահասակ) ծառեր՝ պատրաստած՝ խնձորենիքը դուսենի պարագիզկայի, իսկ տանձենիքը՝ սերկելիի և կեռասը՝ մահալէրի վրայ:

Ծառերի ցուցակը ուղարկաւմ է ձեր:

Դիմել Գօրի Կ. Թ. Ափրիկեանին և Թիֆլիսում.
Օ-во Император Кавказского Сельск. Хозяйства, Барятинская ул., соб. д.

Օր Ծննդեան Յար. Հինգչ..	.	Յունաւար	6
Թիշատակ մեռելոց ուրբ.	.	—	7
Առաջ. բարեկենդան կիր.	.	—	30
Ս. Սարգիս . 2ար.	.	Փետրւար	5
Տեառն ընդառաջ սրկուշ.	.	—	14
Թիշատակ վարդանանց .	.	—	17
Բուն բարեկենդան կիր.	.	—	20
Մուսն ի վիր. Գրիգոր լուսաւորչին, շաբ. Մարտ	.	—	26
Աւետումն՝ Աւագ Հինգչ.	.	Ապրիլ	7
Զատիկ	.	—	10
Թիշատ. մեռելոց	.	—	11
Երեման սուր Խաչի կիր.	.	Մայիս	8
Համբարձումն հինգչ.	.	—	19
Հոգեգալուստ կիր.	.	—	29
Տօն էջմիածնի,	.	Յունիս	12
՝ Մեծին Ներսեսի	.	—	18
Բարեկ. լուսաւորչին պահոց	.	—	19
Ս. Սահակ և Մերոսպ	.	—	30
Բարեկենդան վարդավառի պահոց	.	Յուլ.	10
Վարդավառ	.	—	17
Թիշատ. մեռելոց	.	—	18
Բարեկ. Ածւածն. պահոց	.	Օգոստ.	7
Վերափոխումն	.	—	14
Թիշատակ մեռելոց	.	—	15
Բարեկ. Ս. Խաչի	.	Սեպտ.	4
Խաչվերաց	.	—	14
Թիշատակ մեռելոց	.	—	15
Բարեկ. Վարագայ Խաչի.	.	—	18
Վարագայ ս. Խաչ	.	—	25
Գիւտ Խաչ կիր.	.	Հոկտ.	25

Բարեկ. յիսն. պահոց.	Նոյ.	20
Յիշատ. Թաղէսոփ և Բարդուղիմէսոփ շաբ.	Դեկ.	3
» Ա. Յակովբայ պահոց	—	14
Ո. Ստեփաննոս երկը.	—	26
Պողոս և Պետրոս երեքը.	—	27
Բարեկ. ծննդեան պասի.	—	29



ԿԱՅՍԵՐԱԿԱՆ և ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՏՕՆԵՐԸ, ԵՐԲ ԴՊՐՈՑՆԵՐԸ և ԴԻՒԱՆԱՏՆԵՐԸ
ՓԱԿԻՈՒՄ ԵՆ:

Բնւնւառ	1. Նոր տարի
»	6. Մկրտութիւն Տեառն
Փետրւար	2. Տեառն ընդառաջ
»	18, 19, Բարեկենդան
Մարտ	25, Աւետումն
Ապրիլ	7, 12, Աւագ և Զատկական տօները
»	23, Անուանակ. կայսրունի Ալեքսանդրայ Ֆեօդօվինայի
Մայիս	6, Ծն. Կայսեր Նիկոլայ Բ.-ի
»	9, Նիկոլայ հրաշագործի նշխարժների փոխադարձութիւնը
»	14, Թագադրութիւն կայսեր Նիկոլայ Բ. ի եւ կայսրունու
»	19, Համբարձումն
»	25, Ծն. Կարսրունի Ալեքսանդրայ Ֆեօդօվինայի
»	29 և 30, Հոգեգալուստ
Յունիս	29, Պետրոսի և Պողոսի առաքելոց
Յուլիս	22, Անուանակ. Մայր կայսրունի Մարիա

Ֆեօդօվինայի	»	30, Ծն. Ժառանգի կայսեր Ալեքսեյ Նիկոլայելիչի
Օգոստոս	6, Այլակերպութիւն Տեառն	»
»	29, Գրիգորումն Յովաննու Մկրտչի	»
»	30, Փոխադր. նշխարաց Ալեքսանդր Նեսկու	»
Սեպտեմբեր	8, Ծն. Ս. Աստուածածնի	»
»	14, Խաչ վերաց	»
»	26, Ննջումն Յովիաննու աւետարանչի	»
Հոկտեմբեր	5, Անուանակ. ժառանգի կայսեր Ալեքսեյ Նիկոլայելիչի	»
»	21, Գահակալութիւն կայսեր Նիկոլայ Բ.-ի	»
»	22, Կազանի Ս. Աստուածածոր	»
Նոյեմբեր	14, Ծն. Մայր բագունի Մարիա Ֆեօդօվինայի	»
»	21, Ընծայութն Ս. Աստուածածնի ի տաճարուն	»
Դեկտեմբեր	6, Անուանակ. կայսեր Նիկոլայ Բ.-ի	»
»	25, 26 և 27, Տօն ծննդեան Տեառն	»

ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՊԱՇՏՈՆԵԱՆՆԵՐ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒԻՄ, ՈՐՈՌՔ ԿԱՊ ՈՒՆԵՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Հողաշինարարական և նրկրագործութեան Մինիստրի Կովկասի Լիազօր Պ. Պ. ԱրենիՊով.

Թիֆլիսի նահանգի հողաշինարարական և երկրագործական վարչութ կառավարիչ Գ. Ի. Զելեօնին, Հիլօքսերի կոմիտետի նախագահ Պ. Պ. ԱրինՊով,

(Тифлисъ уг. Серг. и Лермонт.)

Տնայնագործական կօմիտետի նախագահ՝ Պ. Պ.
Արքայի Պալատ, գործափառ—անդամ Ա. Ս. Փիլիպ Ալիքը,

Թիֆլիսի Շերամապս հակոն Կայարանի Տեսուչ
վ. Պ. ԻհԱնՈվ:

Զուլունաբարդի (Ելիսաւ. նահ.) անասնակութական կայացածի կառավարիչ՝ ԶՈՒՆԿՈՎԱԿԵԲԵՅ:

ԳԻՒԴԱՏ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ ԱՆԴՐԿՈՎԿԱ-
ՍՈՒՄ:

Թ Գ և ս ի այգեգործական գլուխոց Ա. ԿԱՐԳԻ,
Քիմիոսում:

Գիւղ ատենեսական բա եւորեների դպրոց—Թէֆլիսի
Բուսաբանական այգուն կից՝ Թիֆլիսում:

Վարվարինեան պտղաբուծական, այսուհետաք գինեգործական և գինեգործական դպրոց Տուափսէի մօտե

Վ օ գ ն է ս է ն ս կ ա յ գ ե զ ո ր ծ ա կ ա ն Ի կ ա ր ւ դ ի դ պ լ ո ց (Վ օ դ ն է ս է ն ս կ ա յ ա ն կ ա յ ա ւ ա ն կ ո ւ ր ա ն ե ա ն մ ի հ ա կ) :

Դեղուակին գիտելի գիտական, այգեգործական և բանջարաբուծական Լկարգի դպրոց, (Դեղուակին, Դաշտավանի վիճ.)

Կուբանեան գիւղատնտեսական դպրոց՝ Եկատերինոգյարում:

Քութայիսի Գիւղատնտեսական Լկաբդի
պարզութայիսում:

Հուբայի այդեղործական և բանջարաբուժական ուսուցումը վահարաբուժական ուսուցում է:

Սակարի անկարանին կից կայ ամերիկական վաղերի մշակութեան համար վարպետներ պատրաստելու կրթարան. (Կվիրիլ կայարան, Շարօպ. ք. Քութ. նահ.)

Օ գ զ ի ս ի դպրոց—կրթաբան, գինեգործական և այգեգործական կրթական՝ գործական բանւորներ պատրաստելու. Օդդիսի գիւղ, Դուռչէթի գ. Թիֆ. Նահ.).

ՑՈՒՑԱԿԱՆ ԵՒ ՓՈՐՉՆԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆՆԵՐ
ԱՆԴԻՆՈՎԿԱՐՈՒՄ:

Կովկասեան Շերամբահական Կայարան (Թիֆ-
Ռիուլի):

Դրա բաժանումունքը (Նիկոլաևսկի գիւղ. Մուշտանում):

Թիֆլիսի բուսաբանական պարտեզը Թիֆլիսում:
Առաջ բաժանում մասնաբերություն:

ա. Բ ա կ ու ր ե ա ն գ գիւղ. Թիվ. նահ.
բ. Ա օ չ ի ի այգեգործական լն գիւղատնտ. փորձ-
նական կալարան:

Ս ու խումի այգեգործական և դիւղատնա,
Փորձնական կայտաբն Սօխումում:

Պետական «Միսիսակօ» կալուածքում Նօվօպօս սիսէի մօտ:

Պիտական «Օղպիսի» կալուածքում Դուշէթի
դաւ. Թիֆ. նահ.

**ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԱ—
ՑՈՒՑԱԴԱՇՏԵՐԸ:**

Զիւանը և իր պատղառու տնկարանը և մեծագույնը (Մինգրելսկի գիւղ, Զիւանշիրի գաւ.)

Բօզարի օնօվկա գիւղ Ելիսաւագա. նահ.)

Սարաթափի փորձա—ցուցադաշտ (Զէտամ կայար. Ելիսաւեա. նահ.)

Զիւանը ի փորձա—ցուցադաշտ (Զիւանըի գիւղ, Սղնախի գաւ. Թիֆ. նահ.)

**ԿՈՎՆԱՌՈՒՄ ԵՂԱԾ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:**

1). Կայսերական Կովկ. Գիւղատնտեսական Հնագութիւն. (Թիֆլիսում) հիմնուած է 1851 թւին.

Սրա բաժանմունքները կան՝ Գանձակում, Քուբայիսում և Երևանում. հրատարակում է «Հայաստան» Խօսայցտու երկարաթաթերթը:

2). Հայոց Գիւղատնտեսական և Տնայնագործ Հնկերութիւնը (Թիֆլիսում), հիմնուած է 1907 թւի վերջերին:

Սրա բաժանմունքներն կան՝ Ալէքսանդրապոլում (հիմն. 1910 թ.), Գանձա գիւղում (Ալիալք. գաւ. Թ. Ն.), Համամլու գիւղ (Երևան. նահ. Ալէքս. գ. 1907 թ.,) Զաքաթալա՝ հիմն. 1910 թ.

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՎԱԶԵՐԻ ՏՆԿԱՐԱՆՆԵՐ

Աղանդան և կայարանի մօտ:

Կօրէ յսուբան, (Քութ. նահ. Շարոպ. գաւ. Կվիրիլ կայարան):

Կոնդուլ (Թիֆ. նահ. Թելաւի գաւ.):

Սակարսկի տնկ. (Կվիրիլի կայար. Շարոպ. գ. Քութ. նահ.):

Սարակուդի (Բագւայ նահ. Լէնքարանի մօտ:

**ԿՈՎՆԱՌՈՒՄ ԵՂԱԾ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:**

Բագւայ բամբակի ցուցադաշտ:

Գանձակի բամբակի ցուցադաշտ՝ Գանձակում Ղարաեազի երկաթ կայար. կից Կօնանու ու վայի Երևանեան նահ.

Կունիսի և ի (Քութ. նահ.), Սամարեատի մօտ՝ բամբամադադ:

Մուղանի բամբակի ցուցադաշտը

Օգուրգէ թի (Քութ. նահ.) ծխախոտ. վորձագաղութ:

Երևանի բամբակի վորձադաշտ և ցուցադաշտը և պաղ. ծառերի. տնկարան: Մարդարի այգի:

Երդուինի նի (Բաթումի վիճ.) ձիթենու և պաղ. ծառ. տնկարանը

ԹՐՉՆԱԲՈՒԾՎԿՆ

- 1) Ռուսաստանի կայության թունաբուծական ընկ. բաժանմուքը Թիֆլիսում՝ Տիֆլիս, Միխայլ. պլ. № 130.
- 2, Հայ Գիւղատ. Ընկ. թունաբուծարանը՝ Եահառ կայարան:
3. Կ. Հեղուցեան. և Լ. Տրիբունակայա թունաբուծարութիւն. Տիֆ. Միք. պլ. № 130
4. Իսարլովա, Տիֆլիս, Կոլոնիանսկ. պ. ս. ճ.
5. Ա. Ի. Դրօգիլաւ, Տիֆ. Վելիկոն. № 32
6. Վետշել, Ջիւղի, ազատ Դիտրիխա

ՄԵՂԻՍՊԱՀՈՒԹԻՆ

1. Կով. մեղուապահական ընկ. Տիֆ. Մաշտանդ.
2. Դիւմա-Աղօլֆ. մեղուար. արհեստանոց և անտեսութիւն. Տիֆլիս Միխայլ. № 140
3. Ա. Բարխուդարեան ստ. Շագալի Յ. ճ. ճ.
4. Միկիթարեան Ա. սել. Ունակ Տիֆ. թ.
5. Զուրաբեան Ո. ստ. Կալագերան Յ. ճ. ճ.
6. Աղաբարեան, Գ. Կառակլիս Էրև. թ.

ՊՏՂԱԲՈՒԾՎԿՆ

- Կով. պտղաբուծական ընկ. Տիֆլիս, սեր. Սերգևսկ. և Լերմոն.
- Եահառ կայարան՝ Բոլով, Ա. Խ.

ՊԵՏԱԿԱՆ ԶԻԱԲՈՒԾՎԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տիֆլիս, Մաշտանդսկ. թու. № 5.

ԱՆԴՐԿՈՎ. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏ

Տիֆլիս, Մոսկովսկ. պլ. № 3.

Գիւղացիական հողային բանկի Անդրկովկ. բաժանմունք՝ Տիֆլիս, Լորիս-Մելիք. № 11

ԱՆԴՐԿՈՎԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԱԶՆՈՒԿԱՆ ԲԱՆԿ

Տիֆլիս, սեր. Սօլոմ. և Պետրա-Վելիկաց

ԶՐԱԲԱՇԽԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՏԵԱՆ

Տիֆլիս Գոլովինսկ № 24.

ԳՈՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տիֆլիս. Եօջօրսկա պլ. № 13.

ԿՈՎԿԱՆԻ ԵՐԿՐ. Մինասբի լիազօլի վարչութիւն

Տիֆլիս, սեր. Սերգ. և Լերմոն.

ՄԱՍՆԱԽՈՐ ՏՆԿԱՐԱՆՆԵՐ

1. Աւարգանեանի պտղատու ծառերի (Թիֆ. նահ. Սկրա կայար.)
2. ՀԱՓԲԻԿԵԱՆ Կ. պտղ. ծառերի, (Գօռի)
3. Փրիդոնով պտղատու ծառերի (Է իֆ. նահ. Գօռ. Գ.)
4. Խետագուրի—պտղատու ծառերի (Նիկօղի կալ. Գօռ. Գ.)
5. Անանովի Ամերիկական պատւաստաձ վազերի Աջամէթ կայար. Ռիօն կայար. Քութ. նահ.



ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Այս տեսաւ և ծախտում են

1) Պտղատու ծառերի թշնամիները և նրանց գէմ կուելու միջոցները: Գինն է՝ կազմած՝ 45 կոպէկ, անկազմ՝ 35 կոպէկ:

2) Ա. Աթանասեան. «Հողի պարարտացումը» պարարտացման ազգեցութիւնը պարզող նկարներով: Գինն է 15 կոպէկ:

3) «Ուղեցոյց գիւղացի կօօպերատորին»: Գինն է 25 կոպէկ:

4) Կ. Բէօմէր: «Ձեռնարկ գիւղատնտեսական թըռչնապտնութեան», բազմաթիւ նկարներով: Գինն է 25 կ.

5) Ա. Բաշինջաղեան «Խաղողի հիւանդութիւն և նրա բժշկութիւնը». 3 նկարներով գինն է 5 կոպ.

6) Վ. Դ. Կոտելնիկով. «Խոտարուծութիւն» 10 պատկերներով, գինն է 20 կոպէկ:

7) Ձեռնարկ „Գործնական բանջարաբածութեան” ըստ (Շատօշների և Շրէդերի) կազմեց Ն. Սիմէօնեանց. պատկերագրեած է 61 նկարներով գինն է 60 կ.

8) Ա. Աթանասեան. «Բամբակը և նրա մշակութիւնը». Գործնական ձեռնարկ բամբակագործութեան 20 նկարներով, գինն է 40 կ.

9) Գէորգ Մուրագեան. „Անջուր Հողերի ոռումն”. պրակ. ա. գինն է 10 կ.

Այս բոլոր գըքերը կարելի է ստանալ «Գիւղատնտես»-ի խմբագրութիւնից, վերադիր վճարով: Հասցէն՝ Տիֆլուս, Ռեդակցիա յարհ. «Գյոխանտես». Նոյնպէս և Թիֆլիսում ԿենՏՊ-նեպԱն, ԳոհՏԵՄԲԵՐԻ, ՓԱՐՈՍ, իսկ Բագւամ «Сотрудникъ» Գրավաճառանոցներում:

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Ա.

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ.

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԵՐՄԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԵԶԱՆԱԿԵՐԸ

Դաշտային տնտեսութիւնը լինում է մի քանի տեսակ. նրա նպատակն է մշակել այն բոյսերը, որոնք աւելի շահաւետ են մշակողին: Եթէ մի շրջան հացաբոյսից է շատ շահում, այնտեղ էլ մեծ մասամբ այդ բոյսերն են մշակում, մի ուրիշ տեղ աւելի շահաւետ է լինում անանապահութիւնը, հետեաբար այդ շրջանում պէտք է շուշը դարձնել կաթնարդիւնաբերութեան վրայ, երրորդ տեղ ձեռնառու է լինում զործարանների համար հում ապրանք պատրաստել, ինչպէս օրինակ վուշ, կանեփ, բամբակ, մետաքս և այլն, մի այլ տեղ յարմար է լինում հում ապրանքներից արդիւնագործական նիւթեր և մթերքներ պատրաստելը, օրինակ՝ շաքար, գինի, օղի, իւղ, մահուդ, չիթ և այլն, ուրեմն այդ տեղում, բնականաբար, զարգանում է արդիւնագործական կամ տեխնիքական տնտեսութիւնը և այլն և այլն:

Դաշտային տնտեսութիւնը առաջ է տարւում զանազան ձևերով.

1. Արօսամարգեր. այսպիսի տեղերի հողը գրեթէ չէ մշակում, խոտը ըստ մեծի մասին լինում է ինքնարբոյս, ու ամբողջ տափաստանը պահում են միայն անասուններ արածացնելու համար:

2. ԱՅՏԱԿՈՎԻՆ հողեր կոչում են այն պաշտելը կոմ արտատեղեցը, որոնք, անտառների մի ըրոշ մասը այրելուց և մաքրելուց յետոյ յատկացնուում են ցանքսի համար, այսպիսի տեղերում հացաբոյսերը շարունակաբար այնքան են ցանում, մինչև հողը ուժասպառ է լինում. այնուհետև նրան թողնում են և դրանց վրայ նորից գարձեալ վալրի ծառեր են սկսում բուսներ, իսկ սրանց տէրերը անտառի մի ուրիշ տեղումն նորից սկսում են մաքրել ու վարել:

3. Խոպան հող ասում է այն հողը, որի վրայ երկրագործը մի քանի տարի անընդհատ հացաբոյս ցանելուց յետոյ, երբ տեսնում է որ հողը ուժից ընկալ թողում է նրան երկար ժամանակ անմշակ, և նա, թածկելով ինքնաբոյս խոտով, հարստանում և նոր ոյժ է ստանում:

4. Հացաբոյսերին յատկացրած արտերը սովորաբար լինում են՝ ա, հանգստացող ցել այն է՝ մի աշտ ցանում է որևէ հացաբոյս, իսկ միւս արտը մնում է որպէս ցել հանգստանալու, որպէս զի ապագայում այն տեղ գարձեալ հացահատիկ ցանւի և բ, բարելաւացրած արտ. սա վերը—յի շուածից տարբերում է նրանով, որ հացահատիկ ցանելուց յետոյ հետևեալ տարին այնտեղ ցանում են երեքնուուկ, առույտ, արմատապուղներ կարտօֆէլ, ճակնդեղ և այլն), սակայն այսպիսի արտ (կարտօֆէլ, ճակնդեղ և այլն), սակայն այսպիսի արտերի վրա ցանքի մեծ մասը լինում են հացաբոյսերք:

5. Պաղափոխութեան եղանակի մշակութիւնով՝ ամբողջ դաշտը վարւում և ցանում է. բ, ցել չէ թողանում, գ, արտի վրայ պարբերաբար ցանում են հացանուում, գի ունեցող գարնացանքսեր (կարտօֆէլ, կանեփի, ծխախոտ և այլն) և աշնացան իւղատու բոյսեր։ Դրանից յետոյ նոյն տեղը պարագացնելով յաջորդ տարին ցանում են գարի, կտւահատ, պատիճաւոր հունգարակ բոյսերը (ոլոսն), լոբի, բակլայ, սիսեռ, և այլն) երրորդ կարգին յաջող են ուում է այն բոյսը, որին սիրել է այդ հողը, ջուրը, կլիման

և որը ձեռնատու է շուկայի համար, և բ, այսպիսի արտի արդիւնաբերական ոյժը պահպանելու համար պէտք է նրան պարարտացնել գոմաղբով կամ թէ արհեստական—քիմիական պարարտանիւթերով. այդ դէպրում մեծ մասմբ այն ընտանի անասունն է պահուում, որը երկրագործութեան աշխատութիւնների ժամանակ պէտք է լինում մշակողին:

Նոյն արտի վրայ եթէ տարի թէ և տարբեր, բայց միմեանց օգնող բոյսեր են ցանուում, այս եղանակին ասում են պտղափոխութեան կամ սերմնափոխութեան եղանակ:

Տնտեսութեան մէջ յաջող պտղափոխութիւնը այն է համարուում, երբ ստացուում է աւելի մեծ արդիւնք, առանց վնասելու հացի արդիւնաբերական ոյժին:

Երկրագործական աշխատանքները կարգաւորելու և երկրագործական աւելորդ մեքենաներ ու գործիքներ չըպահելու համար պէտք է սերմնափոխութիւնը այնպէս դասաւորել, որ ցանքսը հասնի զանազան ժամանակներում և պահանջւի որոշ ժամանակի էլ աշխատութիւն. դրա համար պէտք է հետեւեալ պայմանները ի նկատի ունենալ:

1. Ցանեափ հասնելու եւ ժողովելու ժամանակը. այս կարեւոր է հէնց նրանով, որ հունձը ժողովելուց յետոյ բաւական ժամանակ լինի նոյն արտուում յաջորդ բոյսը ցանելու համար նախապարաստելու:

2. Պարագայման կարգաւորութիւնը: Նախ գոմաղբով պարարտացնելով ցանում են աշնանը հացանուեր, գին ունեցող գարնացանքսեր (կարտօֆէլ, կանեփի, ծխախոտ և այլն) և աշնացան իւղատու բոյսեր։ Դրանից յետոյ նոյն տեղը պարագացնելով յաջորդ տարին ցանում են գարի, կտւահատ, պատիճաւոր հունգարակ բոյսերը (ոլոսն), լոբի, բակլայ, սիսեռ, և այլն) երրորդ կարգին յաջող են ուում է այն բոյսը, որին սիրել է այդ հողը, ջուրը, կլիման

առաջ գալիս վարսակը, ոսպը, կորեկը, բողկը, շաղ-
գամը և այլն: Իսկ առւոյտը, կորնգանը և երեքնուկը
նայելով հողի յատկութեանը, ցանւում են երկրորդ կամ
երրորդ հերթին, միայն հողը գոմաղբով լաւ պատ-
րաստելոց յետոյ:

3, Հողի գրութիւնը, որը պահանջում է մի բոյս
եւ իրանից յետոյ ել բողնում է հողը նոյն գրութեանը
օրինակ կարտոֆէլը պահանջում է միշտ փուխր հողը
նրան հանելուց յետոյ հողը մնում է դարձեալ փուխր:

4, Ցել ունենալու անհրաժեշտութիւնը ցույտ
երկիրներում կայանում է նրանում, որ արտը ապա-
գայ ցանքսի համար կարողանայ լաւ. պատ-
րաստուել, ուժեղանալ իսկ տաք երկրում ցելը նրա-
նով է լաւ, որ հողի ստորին շերտերում բաւականա-
չափ խոնաւութիւն պահելով, ապագայ ցանքսին
պաշտպանում է երաշտից:

Բ.

ԽՈՏԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ

ԽՈՏԱԲՈՒԾԵՐ ԵՒ ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐ

Լեռնային և գաշտային տեղերում մեծ ու փոքր
անտեսութեան աջողութեան գլխաւոր պայմաններից
մէկն էլ պէտք է համարել խոս ցանելլը: Ճանելիք խո-
տերից առանձին նշանակութիւն պէտք է տալ լոբիա—
ծաղիկ խոտերին, այն է՝ առւոյտը (եօնջա), կորնգանը
երեքնուկը, վիկը (ոլոսն) և սրանց նմանները:

Այս լորիածաղիկ խոտերի առաւելութիւնը նրա-
նումն է, որ սրանք օդից ձգում են դէպի իրենց բա-
ւականաչսփ բորակ (ազօտ) և չէնց իրենք էլ մնւում
են նրանով. այս բոյսերը հողում եղած սակաւ ազօտից
դրեթէ չեն օգտառում, ուրեմն և չեն կարող իրենց
բոնած հողին ուժապատ անել և խլել այն, ինչ ոք
թանգ է ուրիշ բոյսերի համար. ընդհակառակը, լորիա-
ծաղիկ բոյսերը հարստացնում են հողը ազօտով,
որովհետև օդից ընդունած ազօտը նախ մտնում է
բոյսի մէջ և յետոյ մնում է նրա արմատների մէջ՝
երբ խոտը հնձում ժողովում են. արմատը փթելով,
ազօտը անցնում է հողի մէջ ու նրան պարարտացնում
է: Բացի այս, լորիածաղիկ բոյսերի շնորհիւ, հողը
փուխրանում է ու այդպիսի խոտատեղերում ցանած
հացարոյսի բերքը միշտ յաջող և առատ է լինում.

Հունդաւոր խոտերը ինչպէս են՝ սլվխոտը, աղ-
լէսապոչը, ոզնուկը, գաշտախոտը, չիմխոտը, կոր-
թումը և այլն, օդից չեն կարող ընդունել քիմիական
պարարտանիւթ և լորիածաղիկ բոյսերի նման չեն կա-

ըսող հողը պարարտացնել, բայց այդ խոտի կարևորութիւնը կայանում է նրանում, որ գրանց ցանելով հողը առ ժամանակ հանդստանում ու հարստանումէ լուծւած աղերով. ուստի անհրաժեշտ է գրանց էլ ցանել

ՀՐԲԻԱԾՍԴԻԿ ԽԱՏԵՐ *

Ա) ԿԱՐՄԻՐ ԵՐԵՔՆՈՒԿ (Բրանի կլեչեր, *Trifolium pratense*)


Ցանւող լորիածաղիկ խոտերից Եւրոպայում և Թուսաստանում ամենատարածւածն է երեքնոոկը (սիրի-սիրի, խնձորախոտ) մասաւանդ կարմրածաղիկ երեխնուկը,—սրան, տեղ տեղ ուրիշ անուններով են տալիս. № 1 նկարում մենք տեսնում ենք նրա ցողունի վերի մասը՝ տերեններով և ծաղիկներով:

Թէ սա և թէ սրա ցեղակից բոլոր երեքնուկները աճում են ինքնաբոյս գրեթէ ամեն տեղ և իբրև լաւ խոտ, ցանւում են բիշ խոնաւոտ տեղերում, մասնաւանդ ուր որ ձմեռը խիստ և երկարատե չէ լինում:

Նա սիրում է կաւոտ, կաւախառն նոյնպէս և կրային հող. լաւ հունձ է տալիս, երբ սրա արտատեղը պարարտացնում են կրային պարարտանիւթերով:

Մի անգամ ցանելուց յետոյ կարելի է 2—5 տարի շարունակ հնձել. մի դեսետինից ստացւում է 200—400 փութ չոր խոտ:

*) Սրանց մասին առև «Գիւղատնտեսի»-ի 1910 թվին հրատապակած «Խոտաբուծութիւն» դրքի մէջ:



Նկ. № 1 ԿԱՐՄԻՐ ԵՐԵՔՆՈՒԿ

Ըս վքւիլ այս էլ առաջանում է նրանից, որ ձմեռուայ չոր կերից յետոյ յանկարծ փոխում են կերը թարմ երեքնուկի, կամ թէ երեքնուկը դեռ մատղաշ ու շատ ջրալի լինի, կամ թէ անասունը արածացնում են ցողովապատ երեքնուկով, և կամ թէ երեքնուկը արածելուց յետոյ տաւարը խկոյն ջուր խմի:

Բ) ՇԻԵԴԱԿԱՆ ԵՐԵՔՆՈՒԿ, Շվեդskii կլեչեր, *Trifolium hybridum*.

Աս վարթամ տերեններով և խոշոր ծաղիկներով է. Նկ. № 2. սրասերմը կարմիր երեքնուկի սերմից աւելի թանգ է. սա սիրում է պինդ և շատ խոնաւ հող. հիւսի-

եթէ երեքնու-
կը հնձւի լաւ
ծաղկած ժամա-
նակը, շատ լաւ
խոտ է լինում.
իսկ եթէ ուշ հըն-
ձւի, կըկողտա-
նայ:

Հնձած թարմ
երեքնուկով ա-
նասունին կշտա-
ցնելը կամ նրա
արտում արա-
ծացնելը մեծ ըգ-
զուռիւն է
պահանջւում. նը-
րանից անասու-
նը կարող է
տկարանալ—փո-

սային ցրտերին կարմիր երեքնուկից աւելի է դիմանաւմ։
ուշ հնձւելիս չէ կողտանում, հեշտ չորանում ու տերեա-
կոթերը՝ պինդ լինելով կարմիր տերեների նման շռւա



Նկ. № 2 Շինդակն երեքնուկ.

չեն թափւում, աճում է ամեն տեսակ հողերում. երբ-
լաւ արմատակալի, երաշտի դէպքում կարմիր երեքնու-
կից աւելի դիմացկոտ կլինի։

Սրա միակ պակասութիւնը այն է, որ եթէ ցան-
ւած լինի, կը պարկէ (հէրանց կերթայ), դրա համար
աւելի լաւ կը լինի, եթէ ցանւի կարմիր երեքնուկի կամ
թէ բարձրահասակ սիղխոտի և կամ աղւէսապոչի հետ։

Զուտ սրանից մի գեսեատինի վրայ պէտք է ցա-
նել 25—40 ֆունտ. իսկ ուրիշ խոտերի հետ ցանելիս,

խառնուրդը շինելու համար երեքնուկ վերցնել 15—25
ֆ., Շւէդական երեքնուկ՝ 5—8 ֆ. և այդքան էլ ուրիշ
հունդաւոր խոտասերմերից միասին վերցրած։

Միզեսեատինից առաջւում է 200—350 պուդ շատ
լաւ չոր խոտ։

Կարմիր երեքնուկի սերմ մի գեսեատինից կարե-
լի է ստանալ 13—18 ֆ. իսկ Շւէդականից՝ 20—25
ֆութ։

Գ) ԱՊԻՏԱԿ ԵՐԵՔՆՈՒԿ, (Ենայի կլևերъ, *Trifolium repens*)

Սրա ցոզունները պարկած են հողի վրայ նկ. № 3.
Նա աւմեն տեղ ինքնաբոյս է, աճում է ճանապարհնե-
րի մօտ, արտերի կողքերին և սրանց նման տեղերում։

Սրա խաւնուրդը ուրիշ խոտերի հետ նրանով
լաւ է, որ բարձրադրի խոտերը հնձելուց յետոյ, նրանց
անակը մնում է շատ առատ արօտախոտ։

Սպիտակ երեքնուկի առաւելութիւնը կարմիրց
նրանով է բարձր, որ սա լաւ է մասում ինչպէս խոնաւ-
ու ցուրտ, նոյնպէս էլ չոր ու թեթի, մինչև անգամ
աւազախառն հողերում։ Շատ թացութիւնից ու շարուա-
նակ երաշտից էլ երկիւզ չունի

Սրա բոյսը ցածրադրի լինելով, հնձելու ան-
պէտք ու անձեռնտու է. հազիւ մի գեսեատինից
ստացւի 100—150 ֆութ չոր խոտ։


Դրա այդ պակասութիւնը ծածկւում է նրանով,
որ նա կարմիր երեքնուկից աւելի երկարակեաց է. առ-
նասունը արորելուց յետոյ շուտով ու զուտում է պնդա-
ցած հողից չէ վնասում և արօտի համար շատ պէտք
քական է։

Մի գեսեատինի վրայ զուտ սպիտակ երեքնուկ
պէտք է ցանել 25—40 ֆունտ. որից կարելի կլինի սերմ

ստանալ 3—4 փութ:

Անասունների փորը փրւում է շատ աւելի կաբժիք երեքնուկից, Շւեդական երեքնուկից—քիչ պակաս, իսկ սպիտակ երեքնուկից շատ անշան կուռչի:

Զիերին պէտք չէ կերակրել Շւեդական թարմ երեքնուկով, մանաւանդ, երբ նա ծաղկաց է լինում. Պրանից անասունի բերանի մէջ դաբաղի նման ցաւ կառաջանայ: Այս երեքնուկի չորացած խոտը դառ-



նկ. № 3. ՍՊԻԾԱԿ ԵՐԵՔՆՈՒԿԻ:

նաւուն համ ունի, բայց անասունները շուտով վարժուում են այդ դառնութեանը. որպէսզի անասունը ախորժակով ուտի կերը, պէտք է այն խոտին խառնել գարնավարի յարդ՝ թրջւած աղաջրում ու խառնած ալիւրով կամ ցորնաթեփով

Երեքնուկը ինչ տեսակ հացահատիկների հետ էլ որ ցանւի, կարող է լաւ զարգանալ ու աճել, մանաւանդ եթէ հողը խոր և լաւ մշակւած լինի. կարմիր և շւե-

դական երեքնուկների համար հողը պէտք է վարած լինի 4 վերջով խորութիւնից ոչ պակաս, իսկ սպիտակ երեքնուկը դրանից պակաս խորութեամբ մշակւած հողումն էլ լաւ է աճում:

Եթէ երեքնուկը ցանւելու է գարնավարի հետ, դրա համար պէտք է արտը աշնանից լաւ ու խոր հերկել. հացահատիկը զարնանը որքան կարելի է վաղցանել, որովհետեւ երեքնուկը միայն վաղցան հացահատիկէ հետ կարելի է ցանել, օրինակ՝ վարսակի, գարու և կամ գարնանացան ցորենի հետ: Անձրեաշատ տեղերում եթէ գարնանը երեքնուկը ուշ էլ ցանւի, կարող է յաջող լինել մանաւանդ ուշացան գարու հետ: Երեքնուկի սերմը պէտք չէ հողի մէջ շատ խոր ժաղուի:

Երեքնուկի և նրա պաշտպան խոտերի սերմերը պէտք է ցանել մի և նոյն օրում:

Եթէ երեքնուկը աշնանը շատ փարթամ աճած լինի, պէտք է կովերը ու եզները քշել նրա վրայ, որ արածեն ու տրորեն, միայն ձեռաց չթողել վերը յիշած կարելոր զգուշութիւնը. կարելի է ծի էլ թողել արածելու, բայց ոչ երբէք ոչխար թողել նշա արտում, որովհետեւ ոչխարի թոյլ ուսները չպիտի կարողանան լաւ տրորել, բոյսը շուտով կծածկւի խիտ ու փարթամ տերեններով, որոնք ձմեռւայ ցրտից կարող են ցրտահար լինել և փշանալ: Արտը պէտք է տրորել տալ երբ նրա երեսը ցրտից քիչ սառի: Լաւ կլինի նոյնպէս արտը անասունների տրորելուց յետոյ, հէնց որ սառչի, ցաքանել, որպէս զի կոճոնքը կամ եղած խոզանը մաքրւի:

Իսկ եթէ երեքնուկը աշն. ն/ց թոյլ աճած լինի ու անասունը արածած չլինի, այն ժամանակ գարնանը, երբ հողը քիչ ցամաքի, պէտք է նրան ցաքանել. Եթէ ցաքանելիս երեքնուկի մի մասը արժատահան լինի, վաս չունի:

Կարելի է երեքնուկը ցանել հաեւ առանձին, առանց պաշտպան խոտերի միայն այս դէպքում նրանց ցանելու է փոքր տարածութեան վրայ՝ սերմերի համար, և ցանելու է շարքացանով, որ հեշտ լինի մինչև նրա զարգանալը մի քանի անգամ քաղհանել:

Տեղ տեղ հնձած երեքնուկը այսպէս էլ են չորացնում. խոտաթմբերը թողնում են երկու օր իւր տեղում, յետոյ շուր են տալիս, մի օրից յետոյ նրանց ժողովում ու փոքրիկ բայց բարձրաւուն, դէղնը են կազմում. երբ կիսաչոր երեքնուկը տաքանում է, դէղերը ցրւում են ու զգուշութիւնով շուր տալով՝ չորացնում: Տաքացած տերեները աւելի շուր են չորանում:

Եղանակը եթէ անձրեային է լինում, պէտք է զգոյշ մնալ որ չայրսի—չփթի. այս եղանակով երեքնուկի չորացնելը աւելի աշխատանք է ուզում ու չորացած խոտի զոյնն էլ գորշանում—թուխանում է:

Դ) ԱՌԻՈՅՑ, եօնջայ, (Լուցերն. Medicago sativa).

Երեքտերեանի խոտաբոյսերից ամենաաչքի ընկնողը և աւելի տաք երկրներում ամենից շատ տարածւածը եօնջան է (առւոյտը). Նկ. № 4. որա տեսակները շատ են դրանցից ամենազլխաւորներն են 1) սովորական կամ ֆրանխական եօնջայ (Medicago sativa), 2) Մանգաղաձեւ կամ սվելլուկան (M. falcata L.), 3) Աւազային կամ միջակ եօնջայ (M. media Pers), 4) Գայլուկային եօնջայ (M. lupulina և վերջապէս 5) Չինական կամ միւ-սիւ (Miu-siu):

Սովորական կամ ֆրանխական եօնջի ծաղիները մանուշակագոյն են և շուր հեշտ է տարբերել ուրիշ տեսակներից: Եօնջի տեսելը կազմւած է երեք փոքրիկ տերեկիներից, որոնք երկարուկ են, հակառակ ձւածեւ վերջաւորութիւններով ու տատանածեւ կտրատած—միաւ-

նում են մի ընդհանուր կոթի վրայ, կազմելով մի ամրող տերեւ: Եօնջին ունի ուղիղ, ցած գնացող երկար արմատներ և դրա համար էլ շատ լաւ դիմանումէ չուրութեանը, ելք արդէն նա արմատակարտծ է:

Եօնջին, իբրև լաւ խոտ տրող, նոյն դերն է կատարում տաք և չորային տեղերում, ինչ դեր որ կատարում է կարմիր երեւնուկը ցուրտ և խոնաւ տեղերում: Եօնջին շատ տարածւած է Վենգրայում, իտա-



Նկ. № 4. ԱՌԻՈՅՑ (եթն. Ա)

իայում, եակոնիայում, մրանսիայում, հարաւային թուսաստանում և վեշտապէս մեղնում՝ կովկասում:

Եօնջի ամենալաւ սերմը ստացւում է հարաւային ֆրանսիայից: Այդ սերմերը աչքի են ընկնում իրանց

տոռւզութեամբ, հաւասար կոյնով և մաքրութեամբ։
Եօնջի մէջ պարունակած բօրակային մասերը մէկ
և կէս անգամ շատ են, քան այդ տեսնում ենք հաւ-
կաւոր խոտերի մէջ։ Որքան տերեները խնայողաբար
պահպանենք, այնքան խոտը սննդատու կլինի, որով-
հետև տերեների մէջ պարունակուղ սպիտակուցը աւե-
լի շատ է, քան ծղնոտի-ձղներինը։ Բանը նրանումն է,
որ եօնջէն հասնելիս, բօրակային և սպիտակուցային
նիւթերը տերեներից աւելի շուտով են պակսում քան-
ճղների ցողունից։

Սերմը մանը է, ուստի աճեցողութեան սկզբնա-
կան շրջանում պահանջում է լաւ հասած ու մշակւած-
հող։

Առաջին տարում նա չափազանց պահանջուտ է-
նողի վերնաշերտի վերաբերեալ, իսկ յետագայ տարի-
ներում այնքան ազդեցութիւն չունի վերնաշերտը, որ-
քան ներքնաշերտի հաստութիւնը և դրութիւնը, որով-
հետև նրանք, ինչպէս արդէն գիտենք, խոր արմատ-
ներ են զցում և յետագայ տարիները ներքնաշերտից-
են հաւաքում բոլոր պահանջուղ սնունդը։

Եօնջէն հողից ստանում է բօրակ, ֆուֆօր, կա-
լիյ և մեծ քանակութեամբ կիր։ Օգից ժողովում է նա-
պատ բօրակը, այնպէս որ, եթէ հողի մէջը բորակ
որքան էլ քիչ լինի, նրա համար դա առանձին նըշա-
նակութիւն չունի. նա զուրկ չի մնայ բօրակից։ Եօն-
ջէն աւելի լաւ կգայ չոր հողում, քան թաց։ Ցրտին-
չի դիմանալ, աշնան աննշան ցրտերն անգամ նրա
վրայ ազդում են։ Գարնանը, երբ ձիւնը վերջանում է,
այդ ժամանակ նա աւելի զգայուն է և շուտ ցրտահար-
է լինում։ Եօնջէն ինքնուրոյն, առանց պաշտպան ու-
րիշ բոյսի, շատ հազիւ են ցանում. լնդհակառակը,
միշտ պիտի ցանել մի ուրիշ բոյսի հետ. վերջինս
պաշտպանում է նրան արևի կիզիչ ճառագայթներից։
Եօնջէն շատ ուշ է ծլում. ծլելուց յետոյ էլ շատ դանդաղ է

մեծանում. պաշտպան բոյսը պիտի ունենայ ընդունա-
կութիւն, որ հողը ծածկի նրան իր տերեներով, որպէս-
զի տակը գտնւած եօնջի համար խոնաւութիւնը պակաս-
չինի. բացի դրանից, աւելորդ կողմնակի խոտեր չեն
բուսնի և չեն խեղտի եօնջին. սակայն պաշտպան բոյսը
երբէք չպիտի այնքան ստուէր անի, որ տակի եօնջէն
լոյսից ու արելից զրկւի։

Միւնոյն ժամանակ պաշտպան բոյսը ինքը չը
պէտք է շատ ուժեղ զարգանայ և երկար մնայ դաշ-
տում, որպէս զի եօնջին չ'խեղտի, մանաւանդ ելք
պաշտպան բոյսը քնում է՝ պարկում է դաշտի վրայ։
Ահա թէ ինչու ամենալաւ պաշտպանը համարւում է
գարին, որ շուտ հասնում է և շուտ քաղւում և այն-
քան էլ խիտ չի ցանում, մանաւանդ աշնան գարինելը։

6) ԿՈՐՆԳԱՆ (Ծըպարզե, *O nobrychis sativa*)

Ցուրտ տեղերում յաջող է գնում երեքնուկի.
մշակութիւնը, իսկ աւելի տաք երկիրնում լոքիա-
ծաղիկ բոյսերից ամենայաջողներից մէկն էլ կորնգանն
է. Նկ. № 5։ Այս խոտը այժմս շատ է ցանում թէ
Ռուսաստանի հարաւային և թէ Անդրկովկասում,
Ախալքալաքի և այլ գաւառներում ու նահանգներում։

Կորնգանը հարաւային չորաւուն տեղերում նոյն
դերն է կատարում, ինչ որ երեքնուկը հիւսիսային
խոնաւ տեղերում։ Սա ինքնարոյս էլ է լինում ու զա-
նազան անուններով է կոչւում ժողովուրդի մէջ։ Սրա
արմատները հաստ ու երկայն են, մինչև 3—5 արշին,

կրա համար էլ կարողանում է գիմանալ երաշտի ու խուսափում է խոնաւ տեղերից. սիրում է կրակաւային կամ մշշգելեան հող. լաւ է աճում նաև ամեն տեսակ հողերում, եթէ միայն հողի ներքի շերտերը փափուկ լինեն ու ջուրը կանգ չառնի այն տեղ. Կորնգանը արշինից աւելի է բարձրանում. գեսեատինից ստացւում է 100—300 փութ պատւական չոր խոտ. կանաչ կորնգանն էլ նոյնպէս լաւ կեր է և անասունների փորը երեքնուկի նման չէ ուսեցնում. Սա ստորերկրեայ շերտերից



նկ. № 5. ԿՈՐՆԳԱՆ.

մնելով, երեքնուկի նման հողի վերին շերտը հարըստացնում է հող! խորշերից իւր երկայն արմատներով ծծած հիւթերով: Մի անգամ ցանած կորնգանը, եթէ հողը լաւ լինի, կարող է դիմանալ 10, 15, մինչև անգամ 20 տարի. սեանողերում լաւ հունձ է տալիս 4—6 տարի շարունակ:

Ցանելուց յետոյ, երբորդ տարին, միայն նու



Կատարելապէս զարգանում է տալիս է առատ հունձ:

Ինչպէս վերը յիշեցինք, կորնգանը թէ եցաշտի և թէ ցրտի լաւ է դիմանում, դրա արտը մի առանձին մշակութեան էլ պէտք չունի:

Ինչպէս արօտաբոյս, կորնգանը յարմար չէ, որովհետեւ անասունը արածելուց յետոյ բոյսը շատ ուշ է աճում, մանաւանդ երբ ոչխարը արածի. սա կրծում է նրա բոլոր ցողունը՝ մինչև արմատաբերանը. աւելի լաւ է մեծատաւար արածացնել, սրանք այնքան ցածրից չեն կրծում ցողունը, անասունի բերանից աղատ մնացած աչքերից շուտով նոր ընձիւղներ են դուրս դալիս:

Կորնգանը ցանում են կամ որևէ հացահատիկի հետ խառն, կամ թէ անխառն, եթէ համոզւած լինեն թէ աշնանը կարող է ծլել և բաւական բարձրանալ, կարելի է աշնացանքի հետ ցանել, իսկ աթէ երկիւղ լինի աշնան երաշտութեան զամ ձմեռւայ անձիւն լինելուց, լաւ է ցանել գարնանը՝ գարնացանքի հետ. նրան գարնանը, աշնավարի ցանքում, չէ կարելի ցանել, որովհետեւ սերմը խոզոր լինելով, հարկ կլինի նրան մինչև $\frac{3}{4}$ վերջոկ խոր թաղել:

Նայելով հողի յատկութեանը, գեսեատինի վրայ կարելի է ցանել 6—10 փութ սերմ: Եթէ սերմը լաւ է և հողը յարմար, կարելի է քիչ սերմ ցանել. իսկ եթէ հողը իր յատկութեամբ յուսալի չէ, պէտք կլինի 10 փութից էլ աւելի ցանել:

Հացահատիկի, իրքև պաշտպանի, հետ կորնգանը կարելի է այսպէս ցանել. աշնանը հողը հերկել խոր, մինչև 5 վերջոկ ու չցաքանած թողնել ձմեռւայ ձիւնի տակ. վաղ գարնանը այդ չցաքանած ցելում ցանել վարսակ, ցորեն կամ գարի. սրանցից վերցնելու է սովորական չափի $\frac{1}{4}$ մասը, ցանելուց յետոյ ցաքանել ու իսկոյն ցանել կորնգանը ու նորից տափանել: Կարելի է կորնգանը ցանել նաև ամառը, յուլիս ի

վերջերին կամ օգոստոսի սկզբներին, առանց խառնուրդի: Այս տեսակ, առանց պաշտպան խառնուրդի, ցանքը աւելի ձեռնուր է չորային տեղերում, որովհետև պաշտպան համարուղ բոյսերը կցամաքացնեն հողը, ու կզմկեն կորնգանին նրան կարեոր խոնաւութիւնից: Ամառայ ցանած կորնգանը կարելի կլինի յաջորդ գարնանը հնձել: Պաշտպան բոյսը հնձելուց ու ժողովելուց յետոյ, նաև ամեն գարնանը, լաւ կլինի կորնգանի արտի վրայ շաղ տալ գաճ, դեսեատինին 10 փութ բաւական է:

Կորնգանը պէտք է հնձել, երբ նա լաւ ծաղկած է, միայն չթողնել որ սերմակալի: սրան չորացնելը դժւար չէ: որովհետև բոյսը շատ ջրալի չէ, բացի այդ, նա ցանւում է առանաւարակ աւելի չորային տեղերում:

Չորացնելիս պէտք է զգոյշ լինել, որ տերեները չթափւեն. երբ հնձւած կորգանը արտումը մնայ առաւտից մինչև երեկոյ ու մի փոքր թոռոմի, միւս որը պէտք է ժողովել ու փոքրիկ, բայց աւելի բարձրաւուն դէզեր կազմել, սրանք շուտով կչորանան, որից յետոյ կարելի կլինի մեծ դէզեր դարսել:

ՍԵՐՄԱԳՈՒԻ համար հնձելու է 5—6 տարւայ ցանած կորնգանը: Օրա սերմերն էլ երեքնուրի նման միաժամանակ չեն հասնում. դրա համար էլ դժւար է լինում նրան ժողովելը. փոքր կալւածքներում պէտք է սրա սերմացուն ձեռքով, մէկ—մէկ ժողովել, այն է հասած գլխները քսակի մէջ թափահարել և դատարկել ու այսպէս շարունակ, 2—3 օրը միանգամ հասածները ժողովել. իսկ մեծ կալւածքներում մանգաղով հնձել, զգուշութիւնով ժողովել, կալումը ծեծել ու սերմը լաւ չորացնելցնել քսակներում ու պահել չոր տեղում:

Օրա սերմերը շուտ են տաքանում, դրա համար էլ պէտք է բարակ շերտեցով քսակներում լցնել:

Մի դեսեատինից կարելի է 60 փութ սերմստանալ:

Ջրել: Յաջող դէպքում դեսեատինը տալիս է 200 փութ թից աւել չոր խոտ. նկ № 12:



Նկ. № 12 ՍՈՎՈՐԱԿԱՆ ԴԱԶՑԱԽՈՑ

ՄԻ ԴԵՍԵԱՏԻՆ ՀՈՂԻ ՎՐԱՅ ԽՈՏԱՍԵՐՄ ՑԱՆԵԼՈՒ ՔԱՆԱԿԸ

Կարմիր երեքնակը՝ 60 փունտ. Սպիտակը՝ 27 ֆ., շւեղականը՝ 37 ֆ. առւոյտը՝ 2 փութ. կորնգանը՝ 12 $\frac{1}{2}$ ֆ. անգլիական բայկրասը՝ 3 $\frac{1}{2}$ ֆ. իտալականը՝ 3 ֆ., Փրանսիական բայկրասը՝ 5 $\frac{1}{4}$ ֆ., Ունուկը՝ 2 $\frac{1}{2}$ ֆ., սիլխուուը՝ 1 $\frac{1}{2}$ ֆ., աղուէսապոչը՝ 1 $\frac{3}{4}$ ֆ., դաշտախոտը՝ 1 $\frac{1}{2}$ ֆ., կորթումը՝ 4 ֆ., վիկը՝ 8 $\frac{1}{2}$ ֆ., մանանեխը՝ 1 $\frac{1}{2}$ ֆ.:

Այս քանակը կարելի է շատացնել կամ քչացնել,
նայելով հողի և կլիմայի յարմարութիւններին:

ԽԱՌՆ ՍԵՐՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ

Խառն խոտեր ստանալու համար սովորաբար վերջնում են լրիածաղիկ և հունդաւոր խոտերի սերմեր միասին. եթէ սրանցից միայն մէկն ու մէկը ցանուի, խոտի հունձը սակաւ կլինի. բացի այդ, եթէ լորիածաղիկ խոտի հետ հունդաւոր խոտ ցանուի, հողը այդ գէպքում շուտով ուժասպառ չի լինի, որովհետև լորիածաղիկ բոյսերը ազօտով նրան կը պարարտացնեն.

Խոտերի խառնուրդ սերմերի ցանելը աւելի ձեռընտու և յուսալի է. եթէ անակնունելի որևէ է պատահարից (ցըտից, երաշտից, խոնաւութիւնից և այլն) խոտի մի տեսակը վնասուի, միւս տեսակը կարող է այդ փորձանքներից զերծ մնալ—դիմանալ ու վնասուածի տեղը բռնելով աւելի լաւ զարգանալ ու ժամանակին լաւ հունձ տալ:

Ստորև դրած խառնուրդ խոտերի սերմերի քանակը կալուածատէրը, նայելով իր հողին, կարող է ըստ իւր բարեհայեցողութեանը շատացնել կամ քչացնել: Երեքնուկի խառնուրդը 2-3 տարի ժամանակուայ տրտի համար:

1. Կաւախառն նոր պատրաստուած արտերում՝ 45 ֆնտ. կարմիր երեքնուկ, 10 ֆ. շւեդական երեքնուկ, 15 ֆնտ. իտալական բայգրաս:

2. Խոնաւուտ, ծանր, կաւային և կաւախառն հողերում ցանելու է 11 ֆ. կարմիր երեքնուկ, 28 ֆ. շւեդական, 10 ֆ. սիզ խոտ և 22 ֆ. անգլ. բայգրաս:

3. Չորաւուն ու մամռուտ հողերում՝ 26 ֆ. կար-

միր երեքնուկ, 17 ֆ. շւեդական, 6 ֆ. սիզիուտ, 7 ֆ. խտալ. և 22 ֆ. անգլ բայգրաս:

ՄԻ ԴԵՍԻԱՏԻՆԻՑ ԽՈՏԱՍԵՐՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՔԱՆԱԿԸ.

Ոչ սկահող արտից կարմիր երեքնուկի սերմ կը ստացուի 13 փութ, սիզ խոտի՝ 14 ֆ. և վիկի 65 փութ: Սկահող արտից—կարմիր երեքնուկի՝ 14 ֆ., սիզխոտի՝ 18 ֆ. վիկի՝ 60 ֆ., առույտի՝ 16 ֆ., կորնգանի՝ 37 ֆ. կորթումի՝ 17.

Միւս տեսակ խոտերի սերմեր միջին թուզ ստացում է. սպիտակ երեքնուկ՝ 25—50 ֆ., շւեդական երեքնուկ՝ 14—20 ֆ., աղուէսապոչի սերմ՝ 13—27 ֆ. դաշտախոտինը՝ 10 փութ:

ՀԱՐՈՒԱԾ ԽՈՏԵՐԻ ՔԱՆԱԿԸ

Նայելով երկրի դիրքին ու կլիմային խոտը հարաւում է 2—4 անգամ. կարմիր երեքնուկը կարելի է հարել 2—3 անգամ, շվեդականը՝ նոյնպէս 2—3 անգամ, սիզ խոտը սովորաբար հարւում է երկու անգամ, առույտը ցուրտ տեղերում հարւում է 2 անգամ, իսկ տաք տեղերում՝ չորս անգամ, կորնգանը՝ 1—2 անգամ կորթումը՝ 2 անգամ, վիկէն՝ մի անգամ, շատ սակաւ գէպքում 2 անգամ, չիմ խոտը՝ երկու անգամ:

ԽՈՏԱՑԱՆՈՒԹԵԱՆ ՕՐՈՒՅՆԵՐԸ

Սերմնափոխութեան առաւելութիւնը կայանում է նրանում, որ գիւղացին խոտ էլ է ցանելու, իսկ վեր-

Ջինիս տւած օգուտները հետևածալներն են. 1) խոսցանուած արտը պապայ հացաբոյսի համար աւելի բերդի է դառնում: Խոտով ծածկուած արտը հանգստանում — պապայի համար սնունդ և ոյժ է ժողովում, նամանաւանդ եթէ ցանւած է լինում լոքիածաղիկ խոտեր, որոնք հողը հարստացնում են օդից ստացած ազօտով, իսկ յետոյ, իրենց երկայն ու մեծ արմատները հողի մէջ տարածելով նրան փուխրացնում են:

2) Յանուած խոտեր մեր ընտանի անասունների համար տալիս են առաս, հժան եւ սննդարար կեր:

Ի՞՞ՉՈՒ ՀԱՄԱՐ ԳԻՒՂԱՑԻՔ ԵՐԲԵՐՆ ԽՈՒՍԱՀ ՓՈՒՄ ԵՆ ԽՈՏ ՅԱՆԵԼՈՒՑ


Յաճախ պատահում է լսել գիւղացիներից թէ իրենց հողը ուժից շատ է ընկեր, դրա համար էլ երեքնուկ չի գուրս գայ, բայց դա սխալ է, մի հող որ տալիս է գարի և վարսակ, երեքնուկ էլ կարող է լաւ բուցնել. բացի այդ, գիւղացիք առարկում են որ, եթէ իրենք խոտ ցանեն, իրենց հացահատիկի համար հող քիչ կը թնայ, սոված կմնան և այլն. բայց այս էլ ձիշտ չէ. սրանցից երեռում է որ գիւղացիք խոտացանութիւնից առաջացած օգուտների հետ ծանօթ չեն: Իրաւ է, թէ և խոտ ցանելու համար նրանք իրենց հացարոյսերի արտերի քանակը պէտք է պակասացնեն, բայց դրա փոխարէն նրանք իրենց տաւարի համար կունենան առատ ու սննդարար կեր, դրանով հնար կունենան իրենց անասունները կուշտ պահել և շատացնել, որով հողը պարարտացնելու գողամբը կը շատանայ ու նրանց հացահատիկի առատ բերքը միշտ ապահովուած կը լինի:

Գ.

ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄՆ

Բոյսերը, զարգանալու համար հողից և մասամբ էլ օդից ստանում են իրենց կարեռը սննդանիւթերը. նրանք հողից ստանում են ազօտ, ծծումբ, ֆոսֆոր, կալիք (մոխիր), կալցի (կիր), մագնիսիկ և երկար, երբեմն էլ ֆլոր. եթէ հողի մէջ այս նիւթերից ոչ մէկն էլ չլինի, բոյսը չի աճի, իսկ որքան շատ լինի սրանցից, այնքան էլ բոյսի աճելութիւնը յաջող կլինի:

Ամեն տարի հողը մշակելով ստանում ենք մեզ կարեռը բերքը. պարզ է, որ հողի միջի սննդատունիւթերի պաշարը հետզհետէ սպառում է, և եթէ մենք այս վեցըրած սննդատունիւթերի փոխարէն նրան ոչինչ չտանք, հողը, ընականաբար ուժասպառ կլինի, ու մեզ այլ ես որևէ բերք տալու անկարող կը դառնայ. զգալի է լինում այս երեսոյթը մանաւանդ ցուրտ երկիրներում, ուր հողը առանց այն էլ զուրկ է լինում թէ բուսականութիւնից և թէ բնական սննդատունիւթերից. իսկ աւելի տաք երկիրներում և սեահող շերամերում հողը դիմացկուն է, շուտով ուժասպառ չէ լինում:



Նկ. № 13 ՊԱՐԱՏԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԶԱՆԱՉԱՆ ԲՈՑՄԵՐԻ ՎՐԱՅ.

Պւրեմն հողը բոլորովին ուժից չճգելու և նրա պատղաւէսութիւնը շարունակ պահպանելու համար անպատճառ պէտք է հողը պահպատացնել:

Ամենալաւ պարարտանիւթը զոմաղբն (փէյինը) է բացի նրանից, հողը կարելի է պարարտացնել նաև արենստական պարարտանիւթերով, և որովհետև հողի միջից շուտով սպառուում են՝ ազօտը, ֆոսֆորը և կալին, ուրեմն պէտք է աշխատենք հէնց այս նիւթերն էլ վերադարձնել հողին:

Պարարտացումը լինում է 1, ամբողջական այսինքն երբ մենք հողին տալիս ենք այն ամեն աննդանիւթերը, որոնք պիտի նպաստեն բոյսի յաջող գարգացմանը և 2, թերի այսինքն այն տեսակ պարարտացումն, երբ որ հողին աւելացնում ենք միայն մի քանի կարելոր աննդանիւթեր:

Բացի սղանցից, տաղբերում ենք պարարտացման երկու հզանակ ա, անմիջական՝ երբ պարարտացմամբ ևնդ իրեն որուին է օգնում և կողմնակի՝ երբ պար-

րարտանիւթը և թէ ցանւած բոյսին եթէ ուղղակի օգուտ չի հասցնում, բայց հողի մէջ այնպիսի փոփոխութիւնն է առաջ բերում, որ դարձնում է նրան պտղաւետ:

ԱՆՄԻԶԱՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՂ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄՆ

Դրա ամենագլխաւոր տեսակն զողամբն է. սա կազմուած է ընտանի անասունների աղբից, մէզից և գոմի յատակին փոռուած չլից. այս խառն բաղադրութեան մէջ գտնուում են բոյսերին կարելոր բուլոր սննդանիւթերը և ուրանց գլխաւոր յատկութիւնն էլ հէնց նրանումն է, որ բոյսերը կարողանում են իսկոյն օգոււել նրանցից: Դոմաղբը նրանով էլ է լաւ, որ փուխը — աւագային հողերի մասնիկները իրար հետ կցում — միացնում է, իսկ ծանր — կաւային հողերը փուխիրացնում է:

Դոմաղբի յատկութիւնը կախուած է այն բանից՝ թէ նախ բննչ տեսակ անասունից է արտաթրուածնա, անասունի կերի տեսակից, գոմի յատակին անասունների տակ փոռուած նիւթի յատկութիւնից, նոյնպէս և աղբի փթելու աստիճանից:

Ջիան աղբը փուխրաւուն է, շուտ է փթում. կիտուկում շուտ է տաքանում. եթէ ձիան աղբ շատ է, լաւ է նրանով պարարտացնել ծանր (կաւային) և պաղ հողերը. ոչխարի աղբն էլ նոյն յարկութիւնը ունի: Եղջիւրաւոր մեծ անասունների աղբը կիտուկում շուտ չէ տաքանում և շուտ էլ չէ փթում — հասնում, որով և բոյսերի վրայ շատ ուշ է ազդում իր զօրութիւնը. սա լու է թեթև հողերի համար:

Խոզի աղբ: Եթէ խոզը կերակրում է արմատապտուղներով, աղբը ջրալի է և այնքան էլ գնահատելի չէ. իսկ եթէ նա կերակրում է ընդեղէններով՝ ալրաթեփով և խոհանոցի թափթփուկներով, նրա աղբը տաշարի աղբի յատկութիւնն է ունենում ու պէտք է

գալիս թեթև հողերը պարարտացնելու համար:

Գողամբ պահելու եղանակը, Գոմազբը պահուում է կամ առանձին աղբանոցներում, կամ թէ հէնց գոմերում: Գոմերում պահուած աղբը ամենալաւ յատկութեան է լինում, որովհետեւ նրա մէջ չեն խառնուում անձրեսի, ձիւնի և այլ ջրեր ու աղբի միջի հեղուկը դուրս չէ թորում—կորչում, այլ մնում է հէնց աղբի մէջ ու գոմում պահելով, անամնատէրը աղատուում է աղբը դուրս տանելու ծախսերից:

Անամունների ոտների տակ՝ գոմի յատակին փոռուածքը լինում է թէ քիւլաշ, յարդ, տերեւ կամ մամուռ (торֆ): մամուռը միւսներից գերադաս է նրանով, որ նա ծծում է իր մէջ անամունի մէզը, որով մի կողմից էլ մաքրում է օդը, իսկ միւս կողմից՝ աղբի յատկութիւնը լաւացնում:

Աղբի պահեստները—աղբանոցները պէտք է այնպիսի տեղերում շինել, ուր ոչ գնացական և ոչ անձրևաջուր կարողանայ մտնել, որպէս զի նրա միջի հեղուկը դուրս չըգնայ. այս պահեստների թէ յատակը և թէ պատերը պէտք է կաւից շինել: Իսկ աղբի իրոնաւութիւնը մշտապէս պահելու համար պէտք է յաճախ ջրել հէնց իր հեղուկով (յոյժա): Երբ աղբը գոմից պահեստն են տանում, պէտք է նրան թափել, հաւասարացնել ու տրորել. Երբ աղբի շերտը 2—3 ոտնաչափ եղաւ, պէտք է նրա վրայ լցնել 3 վերշոկ հաստութեամբ հող, որա վրայ դարձեալ աղբ, դարձեալ հող, այսպիսով պարբերս բար դարսել աղբ ու հող մինչև 8 ոտնաչափ բարձրութիւն ամբ: Աղբը գոմից դուրս տանելու է կամ ամսն օր կամ երկու օրը մի անգամ:

Դոմաղբով արտը պարարտացնելու եղանակը: Գոմարը արտում շաղ տալու ամենայարմար ժամանակը աշշունքն է. թափելուց անմիջա պէս յետոյ պէտք է հողը վարել և նրա մէջ խառնել: Աղբը դաշտ տանելու համար թէ և գարունքն էլ լաւ է, բայց քանի որ գարնանը պէտք

է գարնացանք անել, ուրեմն հարկ կլինի սպասել մինչև կարնացանցանքը աւարտի, իսկ մինչ այդ արդէն տաքերը լնկած կլինին ու. անյարմար կլինի աղբով զբաղւել: Գարնան սկզբին կամ թէ ուզ դուրս տարած աղբը պէտք չէ արտումը կիտուկ—կիտուկ թողնել, այլ ցրուել ու իսկոյն հերկելով հողի հետ խառնել. աղբը արտում որքան քիչ մնայ կիտուկներով և որքան շուտ ցւրուի ու հողին խառնուի, այնքան նպատակայարմար է, իսկ եթէ որ և է յարգելի պատճառով չի կարելի իսկոյն շաղ տալ նրան և հողի հետ խառնել, այն ժամանակ պէտք է աղբը արտի մի կողմում կիտել—շեղ կապել, յատակը հաստ, իսկ վերը սրածայր ու նրան ծածկել հողով ու այսպիսով պահել նրան մինչեւ գործադրելը:

Աղբը գոմից դուրս տանելիս, լաւ կլինի որ գոմի յատակը լաւ քերուի, այնպէս որ մի քանի վերշոկ էլ հէնց գոմայատակի հողն վերցնուի. սա ամենագնահատելի պարարտանիւթ տուողն է, որովհետեւ այսպիսի հողը անամունի մէզով լաւ կշտացած է լինում. այս քերուածի փոխաթէն լցնելու է գոմում նոր կաւահող, որը պէտք է լաւ տրորել ոտներով կամ թէ թակով պնդացնել, ծածկել փոռուածքով ու տաւարը վրան թողնել:

Աւագոտ հողերում աղբը պէտք է աւելի խոր խառնել հողի հետ, քան թէ կաւային հողերում. միջին չափով աղբի հողի մէջ խառնելը լաւ է անել $2\frac{1}{2}$ —3 վերշոկ խորութեամբ:

ՏԱՐԵԿԱՆ ՍՏԱՑԻՈՆ ԱՂԲԻ ՔԱՆԱԿԸ.

Մեծատարից	Զիուց	Ոչխարից	Խողից
Փ	Ռ	Ի	Թ
Թարմ. 600—800.	480—600.	60	125
Կթած. 400—600.	360—480.	42—56	90—105

ՊՈՎՈՐԱԿԱՆ ԲՈՅԱՐԻ ՀԱՄԱՐ ՄԵԿ ԴԵՍԵԱՏԻՆ
ՀՈՂԻՆ ԱՂԲ ՏԱԼՈՒ ՔԱՆԱԿԸ

Մանր հողերը

Լաւ պարարտացնելու համար պէտք է դեսեատին 2—3 հազար վութ աղբ։
Թեթև պարարտացնելու համար 750—1200 փ.

Թեթև հողերը

Լաւ պարարտացնելու համար 1200—1800 փ.
թեթև 600—900 փ.

Սովորաբար մի դեսեատինին տրւում է 2400 փ.
գոմաղբ։

Դոմաղբի ազդեցութեան տեսադութիւնը։

մեծատաւար,	ձի,	ոչխար,	խոզ,
Մանր հողերում.	4 տարի	2 տարի	2 տ.
թեթև	«	2 «	— «
»	—	— «	— « 2 «
Եթէ մի հողի վրայ 60 գիշեր շարունակ գիշերի 300—400 գլուխ ոչխար, կամ 60 գիշեր մնայ 30—40 գլուխ մեծատաւար զամ ձի, այսպիսի տեղը ասւում է ժամանակաւոր փարախ ու այսպիսի հողը շատ լաւ պարարտացած է լինում։			

Գոմաղբը ամեն բոյսի համար կարելի է գործածել. բայց եթէ մի հողի վրայ միայն հացարոյս է ցանում, այն հողը շուտով ուժասպառ է լինում, որովհետեւ հացարոյսերը պահանջում են շատ ֆուֆօրաթթու, իսկ բոյսին կարենը այս սննդանիթը գոմաղբն մէջ շատ չէ լինում. շարունակ հացարոյս ցանելով, եղածը սպաւում է, հետեւաբար և հողը ուժից ընկնում է. ուրեմն նրան ուժեղացնելու համար պէտք է տանք հողին նրան պակաս եղած ֆուֆօրաթթուն այն է՝ սուպերֆուսֆատ կամ բումա—ըլամ, որը գարնանը հէնց ծլած արտի վրայ պէտք է շաղ տալ, առանց խառնելու հողի հետ։

Մարդի կղկղաներ (սուկի) նոյնպէս շատ զօրեղ պա-

բարտանիւթ է. սրան բանացնելու է հեղուկ որութեամբ։ Այս պարարտանիւթը շատ է նպաստում ինչպէս հացարոյսերին և բանջարներին, նոյնպէս էլ խոտատեղերին։ Խառաղբը (կօմպոստ) պատրաստում է ամեն տեսակ բուսական և կենդանական թափթփուկներից, որոնք իրար հետ խառնելով, լաւ խնամելով, ժամանակի ընթացքում փթում են ու դառնում են լաւ պարարտանիւթ։

Տիղմ։ Ճահճատիղմը նոյնպէս գործադրում է իրեւ պարարտանիւթ. մի դեսեատին հողին խառնում են 300—700 փ. տիղմ, ու, նայելով իր յատկութեանը, երբեմն բաւական է լինում մինչև 4 տարի։

Թոչունի ծերտը շատ լաւ պարարտանիւթ է. սա կօմպոստի հետ խառնելու ամենալաւ մասերիցն է։ Առանց խառնուրդի մի դեսեատինին բաւական կլինի 30—100 փ. ծերտ. սրան արտում հաւասարապէս շաղտալու համար պէտք է չորացրած ծերտը փշրել, խառնել իրենից շատ հողի հետ ու շաղ տալ արտի երեսին։ Կանաչ պարարտանիւթ։ Կան մի քանի տեսակ լորիածաղիկ կուլտուրական բոյսեր, որոնք օդից ստանում են ազօտ ու քանի որ կանաչ են, օգտառմ են նրանից, իսկ յետոյ այդ ազօտը անցնում է նրա արմատների մէջ. ուստի մի հող պարարտացնելու համար խոպան թողած ցելում ցանում են այնպիսի լորիածաղիկ բոյսերից մէկնում մէկը (առւոյտ, կորնգան, երեքնուկ, վիկն և այլն). երբ որ բոյսը ծաղկելու մօտ է կամ ծաղկում է, նրան ցցում պարկացնում են ու յետոյ չութով վարում են հողի մէջ $2\frac{1}{2}$ վերշոկ խորութեամբ։ Գողամբ չեղած տեղում այս կանաչ պարարտացումը կարող է նրան փոխարինել. մանաւանդ սա օգտակար է աւազոտ հող ունեցող արտերի համար։

Այս նպաստակի համար ցանքսը պէտք է խիտ առել ու որքան կարելի է վաղ գարնանը։

ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՀԱՄԱՐՈՒԱԾ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՊԱՐԱՐԱՆԻ ԽԵՂԵՑԲԵՐ:

Արհեստական պարարտանիւթերից ամենագործածականներն են. 1, ազոտային, 2, ֆոսֆորաթթուտային և 3, կալի:

Ազօտային արհեստական պարարտանիւթերից յայտնի է Զիլիի բորակ (Կոլինեայ սելիտրա): Սա լինում է գորշ գոյնով. երբ շաղ են տալիս արտի երեսինանձրեից կամ ջրից նա կամաց կամաց լուծում որ հողի ներքին շերտերն է մտնում. սա լաւ է աւելի կաւային քան թէ աւազային հողերի համար:

Այս բորակով լաւ է պարարտացնել հացաբոյսերի արտերը. միայն թէ գարեջրի համար ցանուած զարու արտը չէ կարելի սրանով պարարտացնել: Թէ և կարտօֆէլի և ճակնդեղի բերքը սրա չնորհիւ առատանում է, բայց կարտօֆէլի օսլան և ճակնդեղի շաքարը պակասում են:

Չիլիի բորակը ներգործում է միայն մի տարի: Կալիի պարարտանիւթերը լաւ են կարտօֆէլի, գարու և ճակնդեղի համար. լորիածաղիկ բոյսերին և հաճարին նրանք պէտք չեն, իսկ ցորեն և վարսակը շատ քիչ կարիք ունին կալիի:

Խոտահարերի համար կալիի պարարտանիւթը շատ օգտաւէտ է: Լաւ է սա աւազային, մամուային և կաւային հողերը պարարտացնելու համար:

Արհեստական զանազան տեսակ կալիային պարարտանիւթերից 30% գործ են ածում կալիի աղ, կայինիս և մոխիր:

Մոխիր: Ամենալաւ մոխիր համարւում է ծղնոտի և խոզանի մոխիրը, յետոյ՝ կէճի, կաղնի, թղկի և ուշիշ ծառերինը. իսկ քարածուխի և մամուռի մոխիրը թոյլ են: Պարարտացնելու նպատակով ժողոված մոխիրը պէտք ծածկած պահել, ապա թէ ոչ, անձրկը թրջե-

լով, նրա սննդաբար նիւթը կարող է ողողել—փչացնել: Նայելով մոխիրի յատկութեանը, 1 դեսետինին շաղ են տալիս 75—200 գութ: Մոխիրից արտի երեսը կարող է բարձրանալ—կեղև կապել, զրա համար պէտք է սերմը ցանելուց առաջ նրան շաղ տալ ու վարելով խառնել հողի հետ:

Մոխիրի զօրութիւնը հողում մնում է մի քանի տարի:

Ֆուֆօրաթթիւնին պարարտանիւթերի վրայ երկրագործը պէտք է իր լուրջ ուշադրութիւնը դարձնի, որունեատև հացաբոյսի հուճը ժողովելով մենք հողից խլել ենք նրա մէջ եղած ֆոսֆորաթթւուտը, ուրեմն պէտք է աշխատենք շուտով վերապարձնել նրան այդ պակասը. սովորաբար շատ է գործադրւում ֆուֆօրիս, սուլպերֆուֆատ և բօմաս—ըլաքը. սրանց իրարից ուշնեցած տարբերութիւնը նրանումն է, որ ֆոսֆորային թթւուտը ջրում համահաւասար չէ լուծւում. ամենից շուտ և շատ ջրում լուծւում, հետևաբար և բոյսին մատչելի է լինում սուլպերֆուֆատը, չետոյ բօմա—ըլաքը և վերջը՝ ֆուֆօրիտը. այս վերջինը ջրում գրեթէ չէ լուծւում:

Ֆուֆօրիտը լինում է ալիւրանման. որքան նա մանրափոշի լինի, այքան էլ լաւ է պարարտացման համար. սա լաւ է ինչպէս հացաբոյսերի, նոյնպէս էլ ընդեղէնների արտերը և խոտահարքերը պարարտացնելու համար. նրա փոշին շաղ են տալիս արտի երես. սին ու չութով կամ ցաքանով խառնում են հողի հետ. զօրութիւնը տնում է մինչև 4 տարի:

Սուլպերֆուֆատը աւելի ընդհանրացած պարարտանիւթ է. սա մոխիրագոյն փոշի է. խոնաւութիւնից նա իրար կպչում—գունդեր է գոյացնում, ուստի պէտք է գործադրելուց առաջ վշրել—փոշի դարձնել:

Սուլպերֆուֆատով պարարտացնում են ամեն տեսակ բոյսի արտեր. սրա չնորհիւ ցանքուը աւելի շուտ

Է համում բան ֆոսֆօրիտով կամ թօմաս—շլաքով պարարտացրածը. ցուրտ երկրների և ծանր հողերի համար սա շատ նպաստաւոր է: Աշնացանի արտը սրանով կարելի է պարարտացնել, այդ պէպրում սա փոխարինում է գոմաղբին:

Արտի վրայ սուպերֆոսֆատը կարելի է ձեռքով էլ շաղ տալ, բայց համահաւասար փոելու համար նայելու է, որ մէջը գունդեր չինին ու ցանձլիս լաւ է հետը չոր հող խառնել: Եթէ սուպերֆոսֆատի հետ արտում ուղենաք Զիլիի բորակ շաղ տալ, պէտք է այդ անել զանազան ժամանակներում: Սուպերֆոսֆատին չէ կարելի կիր խառնել. կարելի է խառնել կալիի աղի հետ: Սուպերֆոֆատը սերմը ցանելուց 10—12 օր առաջ պէտք է արտում շաղ տալ ու ցաքանով կամ չութով $\frac{1}{2}$ —2 վեցողկ խորութեամբ խառնել: Հողի հետ: Մրա զօրութիւնը տեսում է 1—2 տաշի:


Մարգագետինների համար սուպերֆոսֆատը անպէտու է:

Թումա-ջլախ. սա բացի ֆոսֆօրային թթւուտից, ունի մինչև $40^{\circ}/_0$ կիր, որը գորշագոյն փոշի է. որքան նուրբ է սրա փոշին, այնքան լաւ է, սա մանաւանդ աղղում է աւաղուտ և կրասակաւ նոյնպէս էլ ճահճային և մամուային հողերի վրայ, ուր որ չի կարելի բանեցնել սուպերֆոսֆատ, գործ են ածում թօմաս—շլաք: Աշնացանի արտը պարարտացնելու համար թօմաս—շլաքը խառնում են գոմաղբի հետ կամ թէ ցանքից գոնէ մէկ ամիս առաջ պէտք է շաղ տալ՝ իսկ գարնացանքի համար—աշնանը պէտք է նրանով արտը պարարտացնել: Քանի որ սրա փոշին, նուրբ է և գործադրելիս կարող է քամին ցըւել նրան, դրա համար էլ խառնելու է աւաղի կամ հողի հետ և շաղ է տալու հանդարտ եղանակին. խառնելու է հողի հետ 2—3 վերշոկ խորութիւնով. զօրութիւնը տեսում է մինչև 3 տարի: կամ երեք հունձ:

Մարգագետինների համար թօմաս—շլաքը շատ լաւ պարարտանիւթ է, մանաւանդ երբ խառն լինի կայինիտի հետ. այս երկու խառնուրդը պէտք է աշնանը շաղ տալ ու ցաքանել՝ սրանցով խոտագաշտը շատ փարթամանում ու լաւ հունձ է տալիս, մանաւանդ պարարտացնելուց 2—3 տարի յետոյ:

Ուկրա-ալիւրը նոյնպէս լաւ պարարտանիւթ է, նաստացւում է ոսկորից. նրա բաղադրիչ մասերում կայ ֆոսֆօրաթթւուտ և ազօտ: Սրանով առհասարակ պարարտացնում են հացաբոյսերի թէ աշնավար և թէ գարնավար թեթև ու աւազոտ հող ունեցող արտերը: Աշնավարը սրանով պարարտացնում են գոմաղբի հետ խառն, իսկ գարնացանի արտը պէտք է աշնանը պարարտացնել:

Ուկրա ալիւրը խառնելու է հողի հետ 2—3 վերշ. խորութիւնով: Մրա զօրութիւնը տեսում է 2—3 տա:



Կ. № 14 ԱՐՅԵՍՑԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՓՈՐՁԵՐ.

ԿՈՂՄԱԿԻ ԱՐԿԵՍՑԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՑՄԻԹԵՐ

Կիրը քոյսերի սննդառութեան համար կարևոր նիւթերից մէկն է ու գրեթէ ամեն հողերում նա լինում է բաւականաշափ. սակայն կան հողեր, ուր կիրը

աւելի յաջող է գործում, դրա էլ պատճառը այլ է։
Կիրը հողի միջի չըլուծող մասերը լուծում է
այնպէս, որ բոյսերը կարողանում են նրանցից օգտվել։
Յետոյ, երեմն արտի մէջ, մանաւանդ ցուրտ տեղե-
րում, սկսում են երեալ աւելու կային բոյսեր։ այս
պարզ նշան է, որ արտի ներքին շերտերում կան շատ
թթուուաներ, որոնց բնաջին ջ անելու համար կիր պէտք
է գործադրել։ Սա փափկացնում է ծանր և կաւային
հողերը, որից նրանք շուտ ցամաքում, լաւ տաքանում
ու նշան մշակելը հեշտանում է։ Թեթև հողերի համար
պէտք է կիր քիչ բանեցնել այն էլ գոմաղբի կամ ար-
հետական մի պարարտանիւթի հետ խառն։ կաւային
հողերում կարելի է շատ բանեցնել։

Կիրը լաւ է նոյնպէս լոբիածաղիկ բոյսերի արտ-
երի համար։ Կիրը մի գեսեատինին գործ ան ածում 50—
150 փութ, ու սա բաւական կլինի մինչև 6 տարի։

Բանեցնելու է այրուած բայց չը բացւած կիր։
Աշնանը արտի մի քանի տեղերում կը ակոյտեր են
դարսում ու ծածկում են հողով, մի քանի օրից նա
բացւում ու մանր փոշի է դառնում, ոը թիւկով
պէտք է հաւասարապէս շաղ տալ արտի երեսին ու ցա-
քանով խառնել հողի հետ։

Կանեփի և կտաւհատի արտերը սրանով չէ կա-
րելի պարարտացնել։

Մարգագետինների համար կիրը լաւ է այն դէպ-
քում, երբ նրա տեղը լինում է մասսամբ ձախնային,
թթուած և որի վրայ աճում են աւելուկացեղ բոյսեր-
այս տեղերից կիրը կը ոչնչացնի ստորերկը եայ
թթուուտները, որից յետոյ կսկսեն բուսնել կերի պի-
րանի խոտեր։ Այսպիսի հողերի համար կիր պէտք կը-
գայ 1 դեսեատինին 150—300 փութ։ Խոտաւեղերը
կարելի է կրով պարարտացնել 5—6 տարին մի ան-
գամ։

Գանով պարարտացնում են գլխաւորապէս երեք-
նուկի արտերը։

Արհեստական պարարտանիւթերը մեկ դեսեատինին պէտք
է գործադրել նայելով հողի յատկութեանը և մասսամբ
էլ բոյսի պահանջին։

Միջին թւով հետևալ քանակն է գործտղուում։
Աշնացան և զարնացան հացաբոյսերի համար։

Համար	15%	Համար	15%
Դաշտական գումարը՝ մասնաւոր թթուուտների համար	430/0	Դաշտական գումարը՝ մասնաւոր թթուուտների համար	30%
Դաշտական գումարը՝ մասնաւոր թթուուտների համար	24	Դաշտական գումարը՝ մասնաւոր թթուուտների համար	6
Ծան. հ. 5	30	Ծան. հ. 6	9
թեթ. հ. 6	30-36	թեթ. հ. 6	24

Կարտոֆելի համար

Ծան. հ. 8-12	18-36	—	4.8
թեթ. հ. 8-15	18-36	—	6-12

Մէկ գեսեատին հող պարարտացնելու համար
բաւական է 30—60 փութ։ Փոսֆորիտ, իսկ ոսկրա ա-
լիւր՝ մինչև 20 փութ։


Արհեստական պարարտանիւթերի Գները *), Զիլիի
15% ազօտախառն արժէ փութը 2 լուրզի. սուպերֆոս-
ֆատը 12—13% փոսֆորաթթուուտի հետ՝ 55 կ. թօ-
մաս—շաքը 15% փոսֆորաթթուուտի հետ՝ 45 կ., կալիի
աղ 30% կալիի հետ—72 կ., կայինիտ 12% կալիի հետ՝
35 կ., գաճ՝ 20—25 կ.։

*) Գները հաշւած են Պետերբուրգում։ Անդրկովկասաւմ փթին
20—30 կով աւելի է։

Ե. լոմբ.

ՊԱՐԱՐՏԱՆԻՒԹԻ ՔԱՆԱԿԸ

1) Խորանարդ ոտնաշափին քանի՛ ֆունտ պարար-	
տանիւթ է պէտք):	
Տաւարի աղը, փթածը	72 ֆ.
“ ” թարմը	48 ”
Յարդախառն թարմը	30 ”
Չիան աղը փթածը	77 ”
“ ” թարմը	28 ”
Փայտուղէնի մոխիր նորը	32 ”
“ ” հինը	42 ”
Մամուռի	30 ”
Դուանօ (թոչնի ծերտ)	53 ”
Աղաւնու ծերտ	24 ”
Կրափոշի	72 ”
Գաճ	53 ”
Մոխիր քարածուխի	48 ”
Ոսկրա ալիւր թաց	59 ”
Գոյաղբի հեղուկը	70 ”



Նկ. № 15 ԵՐԵՎԱՆԻԿԻ ԲԵՐՔԸ ՊԱՐԱՐՏԱՑՐԱՆ ԵՒ 2ՊԱՐԱՐՏԱՑՐԱՆ
ՀՈՂԵՐՈՒՄ:

Դ.

ԿԱՐԱՏԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Կարենացու կովեր. Երաց կերակրելը. խնամքը, եւ
բնաւորիւնը:

Կերակրելը. Անասունի մարմինը կազմւած է մսից,
ոսկրներից և փորոտիքից, իսկ սրանք էլ կազմուած
էն ջրից, սպիտակուցային նիւթերից (միսը, մազը,
եղջիւրները, կճղակները), ածխածնային նիւթերից և
մոխիրից. ուրեմն անասունի կերն էլ պիտի բաղկանայ
այս իսկ մասերից, որոնք բոլորը միատեղ ասւում են
սննդարար նիւթեր:

Անասունի միսը կազմւում է նրա կերի սպիտա-
կուցային նիւթերից. իսկ եթէ կովը սպիտակուցի հետ
ընդունում է նաև ածխածնային նիւթեր, նրանով
սպիտակուցային նիւթը լուծւում է ու ածխածնի
չնորհիւ կերի սպիտակուցը մսի է փոխւում: Ճարպը
կազմւում է անասունի կերի առատ և մննդարար լի-
նելուց: Կենդանին իր մկանունքների ոյժը ստանում է
ճարպային մասերի քայլայումից, իսկ կաթի գոյութ-
քան համար կովը անպատճառ պիտի ստանայ բոլոր
սննդարար նիւթերը:

Միջին թւով 1000 ֆունտ կովի կենդանի միսը	
իր բոլոր կարիքները լրացնելու համար պիտի ունե-	
նայ սպիտակուց	2, 5 ֆ.
ածխածնային նիւթեր	12, 5 —
Հարպեր	0, 4 —
Մոխիրը միշտ բաւականաչափ կայ:	

Այս քանակը ինկատի ունենալով պէտք է նրան
համապատասխան էլ պատրաստել անառունի կերը:
Կովին, օրինակ, ցերեկը ամենապակաս 3 անգամ և
ամենաշատը 5 անգամ պէտք է կերակրել

Կովին չափից գուրս կերակրելը օգտաւէտ չէ: Նրան
համար որպէս սննդարաբ կեր ծառայում է չոր խոռա
ալիւրի թեփ, թարմ խոտ, ճակնդեղ քուսպ և այլն:

Քարնանը և աշնանը չոր կերից թարմին անցնեաւ
և կամ թարմից չորի անցնելը յանկարծակի պէտք չէ-
անել, այլ աստիճանաբար:

ԶԵՐԸ: Կովին կարելի է տալ խմելու գոլ ոչ շատ
ցուրտ ջուր (Ուչօմիւրի 80 աստիճան տաքութիւնից
պակաս): Պրա համար էլ զոմերի մօտ ջըհոր են փորում,
որից ջուրը հանգում լցնում են գոմում շինած մեծ
տաշտերը կամ աւազանները ու այստեղից էլ տալիս
են տաւարին խմելու: Զըին աղ կամ ուրիշ որ և է
բան պէտք չէ խառնել: Զըում են կովերին օրը 2 ան-
գամ, այն էլ կերը ուտելուց յետոյ:

Ամառայ կերակրելը, Աշխատելու է որ կովը ա-
մառը արօտի զնայ. վաղ գարնանից նրան թողնելու է
խոպան ցելի վրայ, մի փոքր անցնելուց տանելու է
մշտական արօտատեղը, իսկ խոտհարքի վրայ երբէք
պէտք չէ թողնել, որովհետև խոտի բերելը թէ կը փչանայ
և թէ կը պակասի: Տօթ օրերին պէտք է նրան ստո-
ւերներում ապատան տալ. լու կլինի գիշեր և ցերեկ
արօտամարգերում թողնել. նա առաւօտները և երես
կոյեանները կուշտ արածելուց յետոյ, մնացեալ ժամա-
նակը որոն է անում, այսպէս պահուած կովի կաթը
առատ և լու կլինի, մանաւանդ երբ կանոնաւոր իւր
ժամանակին էլ կթուի:

Ամենալաւ արօտները համարւում են նրանք,
որոնց վրայ բուսնում են լորիացեղ և հունդաւոր ին-
քնաբոյս խոռաբը:


Ցած և ճահճային տեղերի արօտը մանաւանդ

եղեգնային և ճահճային խոռաբը արածող կովի կաթը
վատ է և անպէտք:

Եթէ կովի արածած խոռաբի մէջ լինի օշինդը
(փելին), սխտորուկներ կամ վայրի մանանեխ. նրա
կաթը կամ փչանում է կամ դառնահամ է լինում
(օշինդըից), կամ սոխահոտ գալիս (սխտորուկից) և կամ
ծծմբահոտ ստանում (վայրի մանանեխ):

Զմեռուայ կերակրելը: Կովի ձմեռուայ լաւ կերը
համարւում է կանաչագոյն չոր խոտ, իւղահունդերի
քուսպ, ճակնդեղ, գաղար, ալիւրի թեփ, յարդ և փա-
փուկ տերեւ. սրանցով սննող կովի կաթը, իւղը և պա-
նիրը գովելի կլինին: Եթէ յարդ և տերեւ շատ տրուի,
ստացւած իւղը պինդ կլինի ու սպիտակ:

Կտաւհատի և կանեփի քուսպը եթէ չափաւոր
արւի (օրը 2—2½ֆ.) շատ օգտակար է, իսկ եթէ շատ
տրուի, կարագը դառնահամ է լինում: Կարտօֆէլը նոյն-
պէս օգտակար կեր է, միայն լինելու է թարմը ու չա-
փաւոր (ամեն մէկին օրը 20—25ֆ.). Նրան խաշել պէտք
չէ: Շատ կարտօֆէլը կաթի համը անախորժ կըդարձնի.
շատ կաղամբն էլ լաւ չէ:



ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Մինչև մի ամիս հորթին պէտք է կերակրել ա-
նարատ կաթով, իսկ այնուհետև կարելի է տալ երեսը
քաշած կաթ. առաջին շաբաթը անպատճառ տալու է
դալ (իսէժակաթ), որպէս զի փորը լուծ պահի: Առա-
ջի 3—4 օրը հորթին 5 անգամ պէտք է ջուր տալ.
յետոյ պակասացնելու է. դրանից յետոյ: Մինչև 8 լր
օրը ջրելու է օրը 4 անգամ: Ութօրական հորթը միջին
թւով կշռում է մինչև 80 ֆտ. ուրիմն 8 օրական հոր-
թը պիտի ստանայ—10 ֆտ. կաթ՝ յետոյ կաթի քա-

նակը պէտք է օրը $\frac{1}{2}$ ժամ, աւելոցնելը 28—30 օրաւ կան հորթին տալու է անարատի տեղ երեսը քաշած կաթ այն չափով, ինչ չափով որ անարատ կաթը աւելոցը ունեցած, 2 ամսական հորթին տալու է մի միայն երեսը քաշած կաթ, 30—րդ օրը երեսը քաշած կաթին խառնել կարտոֆէլի օսլա, եփել ու թանձրացնել: Այսպիսի կաթով կարելի է կերակրել նրան մինչև 6 ամիս եթէ երեսը քաշած կաթ չլինի, նրա տեղը կարելի է շիճուկ տալ. իսկ խոտի պէտք է վաղ հաստից սովորացնել: Մինչև 2 տարեկան հասակը պէտք է չափառապէս կերակրել, իսկ այնուհետև չափահասակներին հաւասար կարելի է տալ կերը:

Օգտակար է տալ սրանց խոտի հետ նաև կարտոֆէլ և ճակնդեղ:

Բնութանաւորումն: Երինջին 2—2 $\frac{1}{2}$, տարեկանից առաջ չէ կարելի բեղմնաւորացնել, իսկ երբ երեսում են կովի դաշտանի նշանները, այն է՝ երբ կովի ձուարանները համնում են, այս բնական երկոյթը կանոնաւորապէս կատարւում է ամեն 4 շաբաթը մի անգամ ու իմացւում են հետեւել նշաններով. կովի արտաքին շրթունքները ուռչում են. անասունը անհանգիստ է դանում, բարձրանում է ուրիշ կովերի վրայ, կաթը պակասում կամ բոլորվին կտրւում է:

Լաւ է բեղմնաւորացնել տալ ձմեռը, որպէսզի աշնազէմ ծնի: Երբ մօտենում է խառնւելու ժամանակը, թէ ցուլին և թէ կովին պէտք է առատ ու մննդարար կեր առաջ, ցուլի զօրութիւնը իգուր չկորցն ելու համար լաւ է հսկել և կապած պահել նրան. կապի տակ պահուած մէկ ցուլը բաւական կլինի 100 կով բեղմնաւորացնելու. մինչ դեռ ազատ թողնւածը—30—40 կով:

Եթէ կովը ցուլի հետ խառնուելուց 4 շաբաթ յետոյ դաշտան չունեցաւ, ուրիշն նա արդէն յդիացել է:

Կովի յդինալը տեսում է առհասարակ 285, երբ' մն կարող է 2 շաբաթ ետ ու առաջ ծնել, ուրիշն

միաւորման օրը նշանակելով պարզապէս կարելի է որոշել ծնելու ժամանակը:

Ցուլի գուլուց յետոյ մինչև 5 ամիս չի կարելի հաստատ իմանալ թէ կովը յդիացել է թէ ոչ, իսկ նրանից յետոյ, երբ փորի աջ կողմը սկսի զգալի կերպով ուռչել, արդէն յդիանալու պարզ ապացոյցն է դա: Իսկ ծնելուց 2—3 շաբաթ առաջ կուրծքը սկսում է կոշտանալ ու արգանդի արտաքին բերանը ուռել: Հէնց այս ժամանակներից կովատէրը գգոյշ է վարուելու նրա հետ, պաշտպանելու է սայթաքելուց, ընկնելուց, վաղեցնելուց և այլն. չպէտք է տալ խմելու սառ ջուր, կերը լինի չափաւոր և չլինասուած խոտ—յարդ. իսկ ծնից մէկ շաբաթ առաջ, երբ կուրծքը բաւականաչափ կոշտացած լինի, պէտք է շիֆել, կթելու փորձեր անել, որ բորբոքումն չառաջանայ, իսկ ծներին պէտք է բսել որ և է իւղ կոմմ ճարպի:

Կովի ծնելու ժամանակը ճշտապէս որոշելու համար կարելի է օգտւել ստորև դրած օրացոյց-աղիւսակից:

Ծնելը: Երբ կովը սկսում է յաճախ միզել և թըրքել կամ յետ նայել, դա պարզ նշան է որ նա շուտով ծնելու է, Ծնելը շատ անգամ զանոնաւոր և յաջող է անցնում. Եորթը գլուխը առաջի երկու ոտների վրայ դուրս է զալիս առանց կողմնակի օգնութեան. իսկ երբ նկատում է, որ կովը տանջուում է և երկունքից չէ աղատում, նշանակում է որ հորթի դիրքը արգանցում ծոռւել է, այս դէպքում հմուտ մարդու օգնութեան է կարօտ, վարպետը ձեռքը ետի կողմից արգանցն է տանելու ու հորթի ծոռւած անդամի (զլիսի կամ առաջի ստների) դիրքը ուղղելով հեշտացնելու է արգանդից դուրս գալը:

Ծնելուց անմիջապէս յետոյ պէտք է կթել, ծածկել մօր մէջքը շորով, խմացնել զոլ ջուր և թեփախառն լափի:

ՅԵՒԱՏՄԱՆ ՕՐԱՅՈՅՑ

Մկիզք		Վերջ		Մկիզք		Վերջ	
Ամիս	թիվ	Ամիս	թիվ	Ամիս	թիվ	Ամիս	թիվ
Յուն.	1	Հոկտ.	12	Յուլիս.	1	Ապրիլ	11
«	8	«	19	«	8	«	18
«	15	«	26	«	15	«	25
«	22	Նոյեմ	2	«	22	Մայիս	2
Փետր.	1	«	12	Օգոս.	1	«	12
«	8	«	19	«	8	«	19
«	15	«	26	«	15	«	26
«	22	Դեկտ.	3	«	22	Յունիս	2
Մարտ.	1	«	10	Մեպ.	1	«	12
«	8	«	17	«	8	«	19
«	15	«	24	«	15	«	26
«	22	Յուն.	31	«	22	Յուլիս	3
Ապրիլ,	1	«	10	Հոկտ.	1	«	12
«	8	«	17	«	8	«	19
«	15	«	24	«	15	«	26
«	22	Փետր.	31	«	22	Օգոս.	2
Մայիս.	1	«	9	Նոյեմ.	1	«	12
«	8	«	16	«	8	«	19
«	15	«	23	«	15	«	26
«	22	Մարտ	2	«	22	Մեպ.	2
Յունիս.	1	«	12	Դեկտ.	1	«	11
«	8	«	19	«	8	«	18
«	15	«	27	«	15	«	25
«	22	Ապրիլ	2	«	22	Հոկտ.	2

Այժմ անժամանակ ծննդը առաջանում է կովի հիւանդութիւնից, վատ սննդից, շատ ուտելուց կամ վայր ընկնելուց, չարչարւելուց, վազելուց և այլն: Ծննդուց 6 ժամ յետոյ պէտք է հորթընկերը ինքն իրեն դուրս գայ, իսկ եթէ իր ժամանակին դուրս չեւ կաւ, նրան նոյնպէս զգուշութիւնով ձեռքով հանելու է, իսկ եթէ այս բանը իմացող հմուտ մէկը չգտնուի, արդանդաբերանին կապելու է մի բարօրը 2—3 անգամ անասունի ետքը լռւանալու է՝ ջրի հետ խառն քիչ կրեօլին կամ կրեօլին:

Ծննդկան կովին պաշտպանելու է միջանցուկ ռդից, որովհետև կարող է նա մրսել և ջերմացաւով տկարանալ: Այս ցաւի նշաններն են՝ դողոցք, ամբողջ մարմի անհանդատութիւն և ետքի մասին թուլութիւն: Այս ցաւը շատ վտանգաւոր է և կարող է տիւ բոշանդպութիւնից առաջանալ ծննդուց 3—4 օր յետոյ: Սրան բժշկելու համար պէտք է մահուդի կտորով ամփող մարմինը հարել, մէջքը ծածկել շորով և տալ լուծ ծողական այն է՝ $1\frac{1}{2}$ ֆ. գլասուբերի աղ (Глауберовую соль.)

ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Կովին պէտք է կթէ միշտ վարպետ և հմուտ քեռք:

Կովի կուրծը երկու մասի է բաժանուած. սրանը գլ իրենց կարգին՝ ծծերի թւին համեմատ, մասնիկների են բաժանուած. ծծերի մէջը գատարկ խողովակ է, իսկ սրանց վերի մասում, կուրծի մէջ, կան աւազաններ (պատերն), սրանցից բաժանուած են կաթնաթոր խողովակները, որոնք ճիւղաւորուած տարածւում են կուրծի մէջ անթէւ մանր խողովակներով. իւրաքանչիւրը սրանցից վերջանում է փոքրիկ փամփուշների

(ալիքուն): Կաթը հէնց այս փամփուշտների կամ գեղածերի մէջ պատրաստելով հսուռմ է խողովակներով: ուլցում է աւազններում, իսկ այնտեղից էլ անցնում է ծծի մէջ:

Լաւ կաթնատու կովի կուրծի թէ խողովակներն են բազմաթիւ և թէ փամփուշտները աւելի մեծ են լինում, իւարկէ աւազններն էլ իր կարգին պէտք է աւելի ընդարձակ լինին:

Կովի կուրծում կաթը միշտ գոյանում է, միայն հարցը նրանումն է, որ պէտք է իմանալ թէ ինչպէս դուրս հանել այնտեղից. Եթէ կաթը իր ժամանակին և ինչպէս պէտք է դուրս չըհանուի, կաթի գոյացումը կըպահասի կամ կըդադարի. ոշանից է, որ կովի կաթը պակասում կամ թէ կաթից կտրում է ու այլ հաշն կթում. յամենայն դէպս իր հորթուկի համար պահում է բաւականաչափ կաթ:

ԿԹԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1, Կրելուց առաջ պէտք է կովի կուրծն և ծծերը լուանալ և ցամաքացնել, որովհետև նրանք կարող են ողտոտւած լինել, իսկ աղբը կաթի մէջ ընկնելով նըրան կապականէ,

2, Կրողը պէտք է նախ իր ձեռները սապանով լուանայ եւ ցամաքացնել,

3, Կովկիրը պէտք է լաւ լուանալ եւ մաքրել.

4, Կրելու է կովի ձախ կողմից, որովհետև դրանով յարմար և հնչած կլինի աւելի ուժեղ աջ ձեռքով սեղմել ետերի լիք ծծերը:

Մանօրութիւն. Առհասարակ կթում են աջ կողմից ու կովն էլ դրան է սովորել. նա անհանգիստ է լինում, երբ կթողը փոխում է իր տեղը. այսպիսի կովերին պէտք է ձախին սովորացնել ծնից յետոյ:

5, Նախ ֆան կրելը պէտք է կուրծը սեղմելավ լաւ մածել, որպէսզի յաջող և լիուլի կթուի.

6, Ծծերը խաչմերուկ առնել երկու ափերում, որպէս զի կուրծի երկու մասերի գեղձերը միատեղ գըրգուռեն:

7, Կարի առաջին եւ երկրորդ հոսուածքը պէտք է քափիլ: Այս 1—2 կաթի շիթերը թէ աննիւթ են (հազիւ 2 տոկոս իւղ ունենան) և թէ կարող են աղտոտ ու զանազան մանրէներով վարակուած լինել. այս մանրէները յաճախ և հեշտութեամբ մտնում են կաթի մէջ ծծերի արտաքին անցքերից:

8, Կրելու է ամբողջ ափով—բոնուցով և ոչ թէ ծծերը քաշքռտելով: Բոռունցքով կթելը հոլանդական սիստեմ է և շատ յարմար է. անելու է այսպէս՝ ծիծը վերցնելու է բուսի մէջ, ցուցամատերով սեղմելու է ծծերի վերի մասերը, իսկ միւս մատները կըսեղմեն ծծի միւս մասը. այսպէս վարուելով թէ կթողը հանգիստ կըտեսնէ իր գործը և թէ կովը անհանգիստ չ'լինի:

9, Առաջին բորած կարով ծծերը չըբրցել. այդ կաթը աղտոտ լինելով կարող է կովիթի ամբողջ կաթը փշացնել և բացի այդ, կաթը ծծերի վրայ չորանալով նրանց կըճաքճաքացնի:

10, Կրելու է օութով, առանց բնդմիջումների և միաչափ:

11, Կրելիս կովի վրայ չըգտնուալ, այլ քաղցրութեամբ վտրուելու է նրա հետ. հակառակ դէպքում կովը կարող է կամակարութեան ցոյց տալ և կաթը պահել:

12, Կրելիս պէտք է նայել թէ եկած կարը սովորականն է արդեօֆ, չունի որև է թերութիւն: (Կաթնաւազ, բար, կարմրագոյն, արիւնուա: կապոյտ և այլն). ու այսպիսի կաթը խառնելու չէ անարատի հետ, այլ իսկոյն այս տկար կովի մասին յայտնելու է տիրոջը կամ հսկողին:

13, Պէտք է լաւ, մինչեւ յիտին կարիլը, կրել. առա-

հասարակ վերջին եկած կաթը շատ թանձր է լինում (մինչև 54% իւղու է), այս կաթը գտնուում է կուրծի այնպիսի անցքերում, որտեղից դժուար է դուրս հոսում. եթէ անկանոն կամ թոյլ կթուի, այն անցքերի բերանները կարող են փակուել, կուրծը կոշտանալ—բթանալ, հետեւաբար կուրծի այս մասը անընդունակ կդառնայ նրանից յետոյ կաթ գոյացնել. թերի կրելով կարելի է ամենալաւ կովը վիշացնել:

14. Նախ կրել առողջ կրվերին և, ապա տկարերին ու սրանց կաթը զատ զատ պահել:

15. Ինչպէս տկար նոյնպէս և առողջ կովերին պէտք չէ կթել կթաղ մեքենայով, որը անսասունին շատ միծ ցաւ է պատճառում, բացի այս, յիշեալ մեքենան կարող է ծծերի անցքերը վերաւորել. աւելի լաւ է տկար կովերին կթելիս ծծերին հաղցնել յատուկ դրա համար շինած մաշկեր կամ քսել նրանց վրայ իւղ:

16. Կթելը աւարտելուց յետոյ կուրծը լաւ շփել ու նորից կթել:

17. Կթելուց յետոյ կուրծը և ծծերը մաքուր չոր շորով պէտք է սրբել—ցամաթացնել:

Կաթնառու կովին պէտք է մբսելուց պաշտպանել. Շատ օգտակար է երկաթ է քերիչով (զաշաւ) և մրձինով միշտ քորել ու մաքրել, իսկ ազդրերի երկայն մազերը խուզել որ նստելիս շատ չաղբոտւի.

Ծնելուց քետոյ կովի ախորժակը բացւում է և շատ կեր ուտելու պահանջ է զգում. որովհետև կերովը պէտք է թէ իլ գոյութիւնը պահպանի և թէ կաթ շինէ, ուրեմն կերը պէտք է լինի ընտիր տեսակից և սննդարար:

Լաւ է նախիրի մէջ ունենալ առանձնապէս 2—3 կով ու սրանց վրայ նախօրօք փորձել կերի տեսակների ազդեցութիւնները:

Կովի տուած կարի քանակը, իւրաքանչիւր կով տալիս է շատ կամ քիչ կաթ. կան կովեր, որոնք տա-

լիս են տարէն մինչև 480 վերջո կաթ. բայց այսպիսիները հազուագիւտ են. լաւ կովը համարւում է այն, որը տալիս է աարէն մինչև 150 վերջո կաթ:

Կովի կաթնառութեան քանակը միաշափ և մըշտական չէ ու ամեն տարի փոփոխում է. այսպէս՝ մինչև 6 ծինը կաթը հետզետէ շտանում է, նրանից յետոյ սկսում է պակասել:

Յայտնի կաթնառանուն Ֆլէյշմանի հետազօտութիւնով կովի տուած կաթի քանակը փոխում է հետևել չափով.

Առաջին	ծինին	տալիս է տարին	93 փ.
Երկրորդ	»	»	169 »
Երրորդ	»	»	120 »
Չորրորդ	»	»	130 »
Հիգեսորդ	»	»	140 »
Վեցերորդ	»	»	143 »
Եթերորդ	»	»	129 »
Աւթերորդ	»	»	115 »
Իններորդ	»	»	100 »
Տասներորդ	»	»	73 »
Տասնեմէկերորդ	»	»	57 »
Տասներերկուերորդ	»	»	50 »
Տասնեւերեքերորդ	»	»	37 »
Տասնեչորրորդ	»	»	30 »

Դրա համար էլ 10—11 ծնից յետոյ կովը պահելը ձեռնուու չէ, իսկ նրան գնելիս պէտք է նախ տարիքը իւժնալ:

Կովի տարիքը իմանալ նրա առամներից շատ հեշտ բան է, քանի նա 5 տարեկան է և նոյնը 10 տարեկանից. իսկ միջանկեալ 5—10 տարին նոյնպէս հեշտ է. բայց գժուար է պարզ որոշել 7—8 տարեկան լինելը: 2 տարեկան ծնած կովը ցածի ծնոտի վրայ կունենայ 2 հատ մշտական միծ ատամներ. իսկ մնացեալները մանր են ու կաթնառտամեր.

Երեք սատրեկանը կունենայ 4 մեծատամ, չորսորդ տարին՝ 6 մեծատամ, հինգերորդ տարին՝ 8 մեծատամ:

9—10 տարեկան կովի առաջի կտրող ատամներից վերի մասը մաշուած—հարուած է, իսկ ատամների միջանցքները ահազին խոռոշներ են կազմում:

5—9 տարեկան լինելը կիմացուի նրա ատամների պսակի հարւելուց. 5 տարեկանի ատամները մաշուած չեն լինում, իսկ 9—9¹/₄ տարեկանինը այնքան են մաշուած լինում, որ ատամների արանքները բաց են մնում, ուրեմն կովի ատամները որքան սակաւ մաշուած լինեն, այնքան նա ջահել է և որքան շատ մաշուած լինեն՝ այնքան նա մեծ տարիքով է: 13—14 տարեկան կովի ատամներից մնացած է լինում նրանց կեղենները միայն, իսկ աւելի հասակաւորի բերանում երեմն մի քանի ատամ թափւած է լինում:

Եղջրւեներից հեշտ է որոշել թէ կովը քանի՞ անգամ է ծնել, այն է՝ ամեն ծնից յիտոյ նրա եղջիւրի վրայ մի խոր ակօս է աւելանում. եթէ կովը ստերճ է մնում (այն տարին չէ յղիանում) նոր ակօս չէ գոյանում, այլ նրա փոխարէն լայն ժիշտանցք է մնում, ակօնների թափչափ էլ կարելի է իմանալ թէ նա քանի անգամ է ծնել. իսկ ակօնների լայն միջանցքների թւերի վրայ եթէ 3 էլ աւելացնենք, կլինի կովի ճիշտ տարիքը:

Ուրեմն վերը յիշուած երկու եղանակներով էլ կարելի է ճիշտ որոշել կովի տարիքը:



ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎ ԳՆԵԼԻՄ ՆՐԱ ՈՐ ՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆՔ ՓՆՏՐԵԼՈՒ:

Հաւ կաթնատու կովի ամբողջ մարմինը պէտք է լինի եռանկիւնաձև. առաջի մասը բարձրաւուն, իսկ ետեի կողմը՝ ցածրաւուն:

Սբանք ցոյց են տալիս, որ փորի լաւ զարգացման շնորհիւ, կենդանու ստամոքսը առողջ է և լաւ զարգացած: Ուկոռները ու կտշին լինելու են բարակ, իսկ մկանունքները՝ թուլաւուն:

Ուկոռների բարակութիւնը երեսում են ոտնելի, եղջիւրների և պոչի բարակութիւններից, գլխի թեթեռութիւնից և կողամիջերի հեռաւորութիւններից:

Իսկ կաշուի բարակութիւնը իմացւում է պոչի արմատի, վերջի կողի վրայի և կուրծի կաշինները երկու մատներով բռնելով—շոշափելով:

Հաւ կովի կաշին լինելու է առաձգական, գիւրաշարժ և նրա ծալքերը բարակ. այս ցոյց է տալիս նաև որ կաշուի տակի իւղը թոյլ է: Բարակ կաշի ունեցող կովի վզի կաշին ծածկուած է լինում բազմաթիւ բարակ ծալքերով:

Մազը պիտի լինի նոսր, կարճ և փայլուն: Վզի վրայ և աճուկները պէտք է շատ թեփոտ լինեն, այդ նշան է, որ նրա ճարպային խուլերը լաւ են զարգացած, որոնք և նպաստում են կուրծի առողջ լինելուն և լաւ կազմութեանը:

Ականջների ներսի թաղանթը ծածկւած է լինում ճարպային բաւլերից արտադրուած դեղնաւուն նիւթով:

Այս վերջին նշանը ցոյց է տալիս նաև որ այդպիսի կովի կաթը լաւ յատկութեան է լինելու:

Լաւ կաթնատու կովի գլուխը պիտի լինի քնքոյշ — կանացի արտայայտութիւնով, դիմակողմը երկարաւուն, թեթև և չոր, աչերը մեծ, տառով ու բարեհայեաց:

Ականջները կըրաւուն — սրածայր, երեսի կաշին սակաւամազ, իսկ ներսի թաղանթը ծածկւած լինի նոսր ու երկայն աղուամազերով:

Ելչիւները բարակ ու մեծ, պարանցը երկայն, բայց ուղիղ, սակաւ ինչ կրծքախութով, կուրծքը լինելու է խոր ընկած և լայն, լայն են լինելու նոյնպէս էլ ուսերը և թիակունըների ետև,

Թոյլ կուրծքը և մանաւանդ թիակների ետի կողմը եթէ փոսեր լինեն, դրանք ցոյց են տալիս անսունի տկար լինելը:

Մէջի ուղիղ, փորը ուռած բայց ոչ կախ ընկած, որոնք ցոյց են տալիս թէ փոքրութիւնից լաւ չէ անուել:

Բունը պէտք է երկարաւուն լինի: Լաւ կաթնատու կովի մէջքի վերջի ոսկորի և գօտամիջի առաջին ողնաշարի մէջ փոսիկ է լինելու:

Ուները պէտք է լինեն բարակ, ուղիղ դրուած և ոչ բարձր, այն է կենդանու բարձրութեան կիսից աւել չլինի:

Կուրծք պէտք է փարթամ լինի. Լաւ կովերի կուրծք կախ է ընկնում, քառում է ապրերին ու դէպի առաջ է տարածւում, սա հաստատ ապացոյց է, որ կուրծք զարգացած և կաթնալի է, իսկ ճարպային շերտերը նրա մէջ թոյլ են ու զօրեղ զեր չեն կատարում: Կուրծի վրայի կաշին լինելու է բարակ, դիւրաշարժ, նուրբ ու կարճ մազերով ծածկուած:

Լաւ կաթնատու կովի կուրծք խաչմերուկ երկու ակօսներով բաժանուած է չորս մասերի, երկայնութեան ակօսը լայնը ակօսից աւելի խոր է:

Ծծերը պէտք է քառակուսի ձեռվ լինեն ու հա-

մաչափ զարգացած, և լինելու են կոնաձն, գլանաձև ծիծունեցող կովը դժւար է կթւում ու սակաւակաթ է լինուում. ծծերը մեծ չեն լինելու, շատ երկայն ծծեր կունենան սակաւակաթ կովերը, երբեմն պատահում է, որ ծծերը միաչափ չեն լինում, դա նշանակում է, որ նրանք անկանոն են զարգացել. Լաւ չեն նոյնպէս շատ մանը ծծերը:

Բարակ կաշի ունեցող կուրծի վրայ պարզ երեւում է լաւ զարգացած երակը. սա էլ լաւ կաթնատութեան նշաններից մէկն է:

Երբեմն մեծ կուրծը կթելուց յետոյ էլ չէ նստում, իր նախկին գրութիւնը չէ կորցնում. այս ցոյց է տալիս, որ կուրծը կամ հարուստ է ճարպով կամ թէ մսակալած է:¹⁾

Ճարպալի կուրծ ունեցող կովի կաշու տակի ճարպափի շերտը շատ զարգացած է լինում, իսկ կուրծի մսակալելը հետեանք է կամ լաւ չկթելուց խութերի զարգանալուն կամ թէ կովը մի ժամանակ տկարացել է և բորբոքումն է ստացել:

Լաւ կաթնատու կովի պոչը երկայն կլինի: Եթէ արսու առատ և գոմին մօտ լինի, լաւ է ձեռք բերել մեծատեսակ կովերից:

Մէծատեսակ կովի առաւելութիւններից մէկն էլ այն է, որ եթէ իրեւ կաթնատու անպէտք լինի, մսացուի պէտք կըգայ:

Ազնւացեղ ցուլ գնելիս պէտք է տեղեկանալ նրա ծագումը և պէտք է ունենայ հետեսալ նշանները՝ 1, զլուխը թիթե և չոր, 2, լայն և ներս ընկած կուրծք, 3, երկայնաւուն ու կլորածն բուն, ուռած փոք և լայն խաչմերուկով, 4, մէջքը ուղիղ, 5, կաշին ու ուները բարակ:

Ցուցահանդեսերում ցուլ գնելը խոնեմութիւն չի. պէտք է ստուգել նրա մօր կամ տառի առւած կաթի քանակը:

Հնատիր կազմուածք ունեցող և ցուցահանդիսանեալ բառ
ըստ լաւ վարձատրուած ու վկայուած ցուլը երբեմն
կարող է մի ամբողջ նախիր փչացնել, եթէ Նրա մայ-
քը սակաւ կաթ տռող է եղել:

Տեսակի ընթրութիւնը։ Տաւարի բոլոր տեսակներն
էլ լաւ և շահաւէտ կլինեն, եթէ նրանց լաւ խնամեն
ու կերակրեն. իսկ վատ խնամքից և վատ անունդից
լաւ տեսակ անասունն էլ կարող է փչանալ և տիրոջը
թասակար լինել, քանի որ իր վըայ եղած ծախսը չէ
հանի։

Ի հարկէ, ազնուացեղ տաւարը վաղուց յայտնի է իր արդիւնաւորութեամբ, բայց, հակառակը, վատ խնամող (տաւարատէր) կարող է չարահար տուժել:

Որ և է տնտեսութեան մէջ ամենալաւ տաւարը տեղականն է, նա կարող է թէ միծանալ և թէ շատ շահաւէտ լինել, միայն թէ պահելու է նրան առանձին խնամքով:

Հեռու տեղերից բերած ազնուացեղ տաւարները
տեղական տաւարի լաւ յատկութիւնները չեն կարող
ունենալ՝ նրանք մեր կլիմային անսովոր լինելով դիւ-
մացկուն չեն լինի, նրանք շուտով են ենթարկվում
այս կամ այն հիւանդութեան, և այլն:

Ոուսաստանում ամենալաւ և շատ տարածուած ազնուացեղ տաւարները հետևեալներն են՝ Հոլանդական, Շվից—Ալբաու, Սիմենտալի, Վիլստերմարշի, Անգէլնի, Այրշիրի: Զէրսէյի, Շօրտհօրնի, Եարոսակի, Խօլմօրի, իսկ Շարօլէ տեսակը սակաւ է տարածւած:

Ուսաստանի անկուլտուրական տաւարներն են.
Վելիկօրուսի, Ուկրայնի, Կիրգիզի և Ղայմուղի,

Սրանց իւրաքանչիւրի արժանաւորութիւնը կա-
րելի է իմանալ հիետեալ ցուցակից:

ՏԵՍԱԿԻՆՈՐԻ ԱՆՈՒՆՆՈՐԻ	Ք Ռ Ճ Ն Ը	Ա Ա Վ Ա Կ Ա Խ Ա Ծ Ո Ր	Հ Ա Լ Ա Խ Ա Կ Ա Խ Ա Ն
	Ք Ռ Ճ Ն Ը	Ա Ա Վ Ա Կ Ա Խ Ա Ծ Ո Ր	Ա Ա Վ Ա Կ Ա Խ Ա Ծ Ո Ր
Չ Ի Ւ - Ա Բ Ա Խ Ա Ծ Ո Ր	35	67	250—300
Մ Ա Խ Ա Խ Ա Ծ Ո Ր	35	65	180—300
Դ Ր Ա Խ Ա Խ Ա Ծ Ո Ր	35	6,	190—300
Կ Ա Խ Ա Խ Ա Ծ Ո Ր	25	64	200—250
Կ Ա Խ Ա Խ Ա Ծ Ո Ր	25	65	200—250
Դ Ր Ա Խ Ա Խ Ա Ծ Ո Ր	18	60	200
Գ Ա Խ Ա Խ Ա Ծ Ո Ր	20	60	150—200
Գ Ա Խ Ա Խ Ա Ծ Ո Ր	40	71	100—150
Ս Ա Խ Ա Խ Ա Ծ Ո Ր	18	60	100—250
Մ Ա Խ Ա Խ Ա Ծ Ո Ր	25	60	100—250
Զ Ա Խ Ա Խ Ա Ծ Ո Ր	15	57	60—300
Մ Ա Խ Ա Խ Ա Ծ Ո Ր	28	62	60—85
Մ Ա Խ Ա Խ Ա Ծ Ո Ր	30	65	60—85
Ղ Ա Խ Ա Խ Ա Ծ Ո Ր	40	65	60—95
Պ Ա Խ Ա Խ Ա Ծ Ո Ր	39	69	75—100

ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կաթնատու կովը ընտրելու է այն ժամանակը, երբ ամեն մի կովից կթած կաթը նշանակուի առանձին, հաշուուի ամսական և տարեկան ստացած քանակը, այդ գէտքում ահա տարւայ վերջը յայտնի կլինի լաւ և վառ կաթնատուն. հետևապէս և այն, թէ մըն է դրանցից ձեռնտու պահելու համար:

Եթէ յայտնի է թէ մի որոշ նախիրին ինչքան և ինչ տեսակ կեր է տրուած (դրա համար պէտք է նոյն պէս մի առ մի գրել), ինչ են արծեցել տաւարապահը, ձիերը, միւս մշակները և այլն, դրանով յայտնի կլինի նաև թէ մի կովի պահելը ինչ է նստում:

Համեմատելով այս թւերը ստացւած կովի արժէքին, պարզ կերեայ թէ որ կովը օգտական է և որը ոչ անօգուտ կով պահելը պարզ է, որ միտք չի ունեանայ:

Առաջնածին կովը միշտ էլ ձեռնտու չէ. այդ բանը պարզելու համար հետեւելու է իմանալ նրա մօք կամ մեծ մօք ցեղը՝ կաթնատութեան հարցում. եթէ խնդիր լինի ընտրել պահելու կամ գնելու համար տարիքաւոր թէ առաջնածին կով, իհարկէ կերաղասելու է վերջինը:

Շատ ընտիր և առատ կաթ տւող կովի հորթը պէտք է պահել. լաւ է գնել կովը, քան թէ վատ ցեղի հորթը պահել մեծացնել. իսկ թէ նախիրից քանի հատ ջահելը պահել և քանիսը հեռացնել, սա կախուած է զանազան պայմաններից:

Տնտեսութիւնից հեռացրուած կովերի թիւը չպէտք է վրդովի նրա տիրոջը, որովհետև աւելի լաւ է ունեանալ սակաւաթիւ միայն ընտիր, քան թէ բազմաթիւ ու վատ կովեր. դրա համար էլ շատ մանրակրկիտ քըննելուց յիտոյ պէտք է նախիրից հեռացնել թոյլ, տկարուտ վեժող, շուտ շուտ տկարացող, լաւ չզարդացած

կուրծ ունեցող կովերին, նոյնպէս և պառաւացածներին, և քիչ կաթտւողներին, թէ կուզ սրանք առողջ էլ լինեն:

Հեռացրուածների փոխարինող ջահել կովերի թիւը աշխատելու է պակաս չանել և միշտ նշանակելու է ամեն տարուայ հեռացրածների միջին թիւը:

Կովը առնասարակ մինչև 10 տարի կարող է պահպանել իր տուած կաթի միջին քանակը. այս հաշուով, եթէ ուղենանք նախիրի մէջ եղած (նախիրում հաշւելու է 100 գլուխ) կովերի թիւը չպակասի, իւրաքանչիւր տարի պէտք է հեռացնել 10 կով՝ իբրև հասակաւոր: 2—3 հատ էլ կարող է ոլատահել որ զանազան հանգամանքներից ստիպուած պէտք կլինի հեռացնել, ուրեմն իւրաքանչիւր տարի հեռացնել 12—13 կով, իսկ որպէս զի նախիրի նախկին թիւը չպակասի, պէտք է պատրաստ ունենալ նոյնքան 3 տարեկան ջահել կովեր:

ԻԻՂԱԳՈՅՐԾՈՒԹԻՒՆՆ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՒՈՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

Օրական 20 վերքօ կաթ ստացող տնտեսութիւնը կարող է տարէն 3—5 հազար վերքօ կաթ գործադրել իւղ շինելու համար, ու նրան պէտք է ունենալ հետեւալ գործիքներն ու իրերը՝

1	սերդատ «Պերֆէկտ»	10	վերքանոց	75	ր.	— 4.
2	հատ փայտէ գոյլեր	3	վերքանոց	15	»	»
3	»	»	փոքրիկ գոյլեր $\frac{1}{2}$	վերքանոց.	4	50
2	»	պարզացնող տաշտեր.	• • .	3	»	»
1	»	կաթնաչափ.	•	5	»	»
1	»	սառցարան Շմիդտի	•	25	»	»
1	»	խնցի «Վիկտորիա»	$2\frac{1}{2}$	վերքանոց	25	»
1	»	» դանիական.	•	38	»	»
1	»	կաղապար (իւղի)	20	փունտանոց.	2	50
2	»	» կլոր.	•	1	»	30

2	ջերմաչափեր	30
4	փոքրիկ թիակներ.	—
1	տաշտ իւղի համար.	50
1	սեղան	50
ներկ, մագաղատ թուղթ, աղ, քաթան, վոճիներ և այլն.	25	
5	կուկիթներ.	25
	Ընդամենը.	251 և 60

Աւելի շատ կաթ եղած դէպքում պէտք է սերզա-
տի, խնոցին և դոյլերի և լեռ մեծացնել:

ՊԱՆՐԱԴՈՒՅԹՈՒԹԻՒՆ

Կար մերելր: Պանիր շինելու համար պէտք է կա-
թը մերել (թթւացնել) շրդանի մայով կամ թէ դրա
համար պատրաստուած փոշի կամ հեղուկ մակարդնե-
րով (մայա):

Պանիր մակարդող շրդանը լինելու է չոր, առանց
կարմիր երակների և անախորժ հոտի, շրդանը պէտք
է մանրացնել, ջրով կամ շիճուկով թրջոց դնել ու
աղել:

Խանութներում գնած պատրաստի մակարդը գոր-
ծադրելուց առաջ պէտք է ջրով բաց անել:

Մայիս ոյժը միշտեսակ չէ լինում և ամեն
անգամ պէտք է նրան փորձել: Դրա համար վերցնելու
է փութի $\frac{1}{100}$ մաս կաթ, որոշեալ աստիճանով տա-
քացնելու է ու խազնելու է նրա մէջը փութի $\frac{1}{1000}$
մաս պատրաստի մայա, լաւ խառնելով, ժամացոյցին
դիտելու է թէ հրքան ըոպէում է նա լաւ մակարդ-
ուում ու ըոպէների այս թւից կիմացւի մայի զօրե-
զութիւնը. եթէ կաթը մակարդւեց 15 ըոպէում,
նշանակում է որ մայի զօրութեան չափը 15 ըոպէ
է և այլն:

Թանի, որ մայէն միատեսակ չէ, ուրեմն և կաթի

մակարդուելու ժամանակն էլ տարբեր է լինում, ժա-
նաւանդ որ թէ ինչ տեսակ պանրի համար է գործա-
դրուում մայէն, եթէ թոյլ մայա ունենանք, պէտք է
շատ բանացնենք, իսկ շատ մայից պատրաստուած
պանրը դառնահամ է լինում:

Պանրի համար գործադրած կաթի տաքութեան
աստիճանը միաչափ չէ լինում, սա կախուած է պան-
րի տեսակից և տեղական պայմաններից. կոչտ ու չոր
պանրի կաթը լինելու է աւելի տաք, քան քնքոյշ ու
փափուկ պանրինը:

Մակարդուած պանրացուն կամ կարատում են,
որ միջի շիճուկը հեշտ գուրս գայ, կամ չեն կտրա-
տում. կտրատելու համար գործ են ածում զանազան
ձևի դանակներ. ընտր ածու շվեյցարական պանրի համար,
տաւիդ՝ հոլանդական պանրի համար, ամերիկական դա-
նակ՝ չեստեր, բակչտէյն, լիմբուրդեան և ուրիշ տեսակ
պանրիների համար և այլն:

Քինդ պանիր ստանալու համար մակարդուածքը
կտրատելուց յետոյ կրկին տաքացնում ու ծանրոցի
տակ քամ են ձգում:

Կակուդ պանիրը կրկին անգամ չեն տաքացնում
ու ծանրոցի տակ քամ չեն զցում:

Իսկ փափուկ պանիրը թէ և կրկին անգամ չեն
տաքացնում, բայց ծանրոցի տակ քամ են զցում:

Լերդացած — մակարդուած պանրացուն կրկին տա-
քացնելու նպատակը այն է, որ նրա մասնիկները լաւ
խառնուին, իրար կպչեն և միջի բուլոր շիճուկը դուրս
վանեն:

Պանրացուն երկրորդ անգամ տաքացնելու հա-
մար շինուած են յատուկ կաթսաներ:

Լերդացած պանրացուն կտրատելով լցնում են
կաղապարների մէջ (նայելով թէ ինչ տեսակ պանիր
են ուզում ունենալ) ու զնում են սեղմիչի (պրէս)
տակ կամ չեն դնում: Սեղմիչները լինում են երկու

տեսակ՝ պտուտակով և նիգով. իսկ Անդրկովկասի շատ տեղերում մակարդւած պանրացուն լցնում են քսակի մէջ ու բերանը պինդ կապելով դնում են ծանր քարերի տակ որ քամուի:

Սեղմիչի տակ դնում են, որ միջի շիճուկը մզուի դուրս գայ:

Անարատ կաթից (երեսը չը քաշած) շինած պահը թոյլ սեղմիչով են քամ գցում, քան երես քաշածից շինածը:

Պանիրը աղում են երր նա կաղապարի մէջ ձևակերպուել է, սակաւ է պատահում, որ նրանից առաջ, խմոր ժամանակը, աղեն:

Լաւ է ձեսկերպուեց յետոյ աղել, որովհետեւ ուտելիս մարդի ճաշակի համաձայն էլ կարելի է պանիր ստանալ՝ աղի կամ անալի:

Աղած պանիրը առհասարակ պահում են ներքնատներում, որ լաւ հասնի (դուրս կանգնի). սրա համար ներքնատունը պիտի ունենայ $85^{\circ}/_0$, $90^{\circ}/_0$, խոնառութիւն և նայելով պանրի տեսակին, 10° — 20° տաքութիւն իսկ 20° -ից բարձր տաքութեան մէջ պանիրը շուտ և անկանոն կհասնի, բայց 10° -ից պակաս տաքութիւն ունեցող տեղում բոլոր տիսակ պանիրները կանոնառապէս չեն կարող հասնել:

Ներքնատների մէջ ինչպէս ճանճ, նոյնպէս ուրիշ որ և է միջատ գտնելու չէ:

Պինդ պանիրը եթէ լաւ ըրպահուի, նրա մէջ կը դոյանայ պանրի որդ (Сырякай չերվ, Acarus siro). նրանց ոչնչացնելու համար պանրին քսել իւղ, պինդ աղաջուր կամ սպիրտ, իսկ դարակները սապնով լաւ լուանալ:

Ներքնատան մէջ ընակւած մկները և առնէտները ոչնչացնելու համար երբէք թոյն չգործադրել, այլ դնել թակարդներ:

«ՉԱՆԱԽ» ՊԱՆԻՐ *

Վերջին տարիներս Կովկասում „Չանախ“ պանիրը մեծ գործադրութեան մէջ մտաւ, այնպէս որ այժմս Բորչալուայ և Ալալիքալաքի գաւառներից ու Ղարսի Ջրջանից արտադրուում է նրանից տարէն մինչև 80 հազար փութ:

Չանախ պանիրը պատրաստում է ինչպէս կովի, նոյնպէս և ոչխարի կաթից:

Կովի կաթը (1 գ. արժէ 50—60 կ.) թէ և աւելի չժանէ ոչխարի կաթից (1 գ. արժէ 80—85 կ.), բայց որանից շինած պանիրը աւելի էժան (4 — 50 կ. փութը) է նստում կովի պանիրից (5 ր.— 5 կ. փութը), որովհետեւ 8 գ. կովի կաթից ստացում է 1 փութ. պանիր, մինչ դեռ ոչխարին 5 գ. կաթիցն է ստացում 1 փութ պանիր:

Քանի որ կովի և ոչխարի կաթերի կազմութեան ըաղաղրիչ չափերը տարբեր են, հետեւաբար և չէ կարելի միևնույն եղանակով պատրաստել նրանցից պանիրը:

Կովի կաթի բաղադրութիւնը	Ոչխարի կաթի բաղադրութ.
իւղ . . . $3, 4^{\circ}/_0$	" " $6, 5^{\circ}/_0$
Կազմին . . . $2, 9^{\circ}/_0$	" " $4, 2^{\circ}/_0$
Ալբում. (սպիտ.) $0, 6^{\circ}/_0$	" " $1, 3^{\circ}/_0$
Կաթնաշաքար $4, 5^{\circ}/_0$	" " $4, 5^{\circ}/_0$
Մոխիր . . . $0, 75^{\circ}/_0$	" " $0, 85^{\circ}/_0$

Ոչխարի պանրի սուր համը հետևանք է նրա անեսակարար կշռի (յդֆլինայ ենք) թեթև չափ ունենալուն:

Պանիր մերելու համար կովի կաթը պէտք է ունենայ 30° տաքութիւն. եթէ դրանից աւելի տաք լինի կաթը, կստացւի կօօս ու պինդ պանիր, իսկ եթէ նրանից պակաս լինի ջերմութիւնը, կստացւի նահանքւած

*) Քաղաքաց շնիւղտնեսիր-ի 1910 թ. №№ 1 և 2 համար թերի:

և փշրւող պանիր:

Մայէն գցելուց յետոյ կաթը մերւել է թէ ոչ իմանալու համար պէտք է նշանակեալ ժամանակը լրանալուց մտաց թաթախել մերանի մէջ և զգուշութեամբ հանել ու կեռ պահել մտաց, երբ հանած (մերանը բռնած) կաթը մի փոքր բարձրանում է մատի հետ և յետոյ շուտով բրթւում ու վայր է ընկնում այնպէս, որ մատի վրայ կաթի յետը կամ սպիտակ բրթուչ անդամ չի մնում, նշանակում է որ մերւածքը յս ջող է եղել. այն ժամանակ փայտէ գանակով ամբողջ մերւածքը կարատում են ընկոյզի մեծութիւնով. և զգուշութեամբ խառնում — տաքացնում են թոյը կրակի վրայ մինչև 35° օ., որից յետոյ լցնում են քսակի մէջ՝ որ շիճուկը քամուի ու աշխատում են պանրին տալ մի սրոշ ձեւ և ձեռներով այս քամւած զանգւածը սեղմելով, առաջացնում են կեղի:

Իսկ եթէ մերւածքը դեռ հասած չէ, պէտք չէ նրան կտրատել, որովհետև պանրի քանակը կը պակասի և կստացւի լվատ պանիր:

Քատկից հանելով գնում են այն զանգւածը դրա համար յատուկ պատրաստած փայտէ ամաների (չանախների) մէջ և վերեկից էլ ծածկում են նոյնանման ամանով. երբեմն պէտք է պանիրը ամանում շուռ տալ. առաջին անդամ շուռ են տալիս ամանի մէջ գնելուց 15 րոպէ յետոյ, երկորդ անգամը՝ 1/2, ժամից յետոյ, իսկ այնաւետեւ՝ ամեն 2—3 ժամը մի անգամ պէտք է շուռ տալ, որպէս զի երկու կողմերումն է գոյանայ միանման կեղեւ:

Զանախի կողքերին շինում են փոքրիկ ծակոտիկներ, որոնցից գուրս է գալու դեռ ևս պանրի մէջ մաշած շիճուկը:

Կան գործարաններ, ուր գործ են ածում ոչ փայտէ, այլ թիթեղեայ չանախներ, որովհետև սրանը աւելի էժան են, բայց փայտէ չանախները գերադաւ-

են նրանով, որ պանիրը նրանց մէջ աւելի երկար է պահում իւր ջերմութիւնը, որը և հպաստում է նրա հաստ կեղեւ գոյանալուն. այն կեղեն է, որ օդնում է պանրի լաւ հասնելուն:

Երբ նոր պանիրը ստանում է կանոնաւոր ձև և ամրանում է կեղեւը, վերի ամանը վերցնում են, որպէս զի պանիրը սառչի. բայց նրան դարձեալ թողնելու է ամանում մինչև եռ գալը:

Պէտք է օրը 6—7 անգամ շուռ տալ նրան. եռ գալը տեսում է 1—3 օր՝ նայելով եղանակին:

Երբ համոզւած էք լինում թէ եռ գալը դադարել է, գցելու է նրան բոլլ աղաջրում:

Աղաջրի ամրութիւնը այսպէս է որոշում. նրա մէջ գցում են հաւի մի ձու, եթէ ձուն ջրի երեսին կանգնի, նշանակում է որ աղաջրուրը լաւ է:

Պանիրը աղաջրում պահում են 6 օրուայ չափ. Թոյլ աղաջրի նշանակութիւնը նրանումն է, որ պանիրի երեսը հաստ կեղեւ չըգոյանայ և թէ աղաջրուրը անարգել կարողանայ պանրագնդի մինչև միջուկը թափացնել:

Աղաջրի տակառը պէտք է ընդարձակ լինի, որ պանրի գնդերը, քանի դեռ փափուկ են, իրար չկպչեն. Երբ կեղեւը լաւ ամրանայ, պէտք է պանիրը հանել թոյլ աղաջրից ու ցցել աւելի պինդ աղաջրում (1 փութ պանրին գործ են ածում մօտաւորապէս 4 փունտ աղ):

Պանիրը պէտք է դարսել աղաջրի տակառումն կողք—կողքի վրայ պարկացրած: Աղաջրի տաքութեան աստիճանը լինելու է 10—12° օ. Եթէ աղաջրի տաքութիւնը սրանից բարձր լինի, պանիրը նորից կսկսի եռ գալ: Իսկ եթէ ցած լինի, պանիրը կճաքճուի:

Կովկասիան այս աեսակ պանրի համը և յատկութիւնը յարատեն պահպանելու համար պէտք է նրան միշտ աղաջրում պահել, որ չըշորանայ:

Զանախ պանրի ամեն մի գնդի ծանրութիւնը
լինում է 15—19 Գունատ. եթէ աւելի մեծ գնդեր շի-
նուեն, աղը դժուարութեամբ կըթափանցի նրանց մէջ,
որով և շուտ էլ կը փչանայ. իսկ եթէ աւելի մանր
գնդեր շինուեն, պանիրը ուշ կրհասնի:

Կռվի պանրի փութը արժէ գործարանում մինչեւ
6 բուբի:

Ոչխարի կաթից չանախ պանիրը շինելու կերպը
համարեա նոյնն է. ինչ որ կովի կաթիցն է, զանա-
նութիւնը միայն նղանումն է, որ ոչխարի կաթը
պէտք է մերել աւելի բարձր աստիճան տաքութեան
ժամանակ այն է՝ 34 օ, և մերւածքը պիտի տևի 30—
35 րոպէում (իսկ կովինը տեսում է 25 րոպէում). ոչ-
խարի պանրի մերուածքը պէտք է կտրատել աւելի
մեծ կտրներով՝ քառակուսի ձեւըով — 4 սանթիմետր
մեծութիւնով. սրան պէտք չէ տաքացնել, որովհետեւ
տաքացնելուց նա դեղնւում ու գառնանում՝ է. միւս
բաները անելու է այնպէս, ինչպէս որ անւում է կովի
կաթից պանիր շինելիս:

ԹԹՈՒԱՍԵՐ (ՍՄԵՏԱՆԱ) ՊԱՐԱՐՏԵԼՈՒ ԵՂԱՆԱԿ

- 1, Սերգատի պտուտակը այնպէս յարմարացնել,
որ 8 ֆունտ կաթից ստացուի 1 ֆունտ սեր:
 - 2, Ստացած թանձրսերը տաքացնել մինչև 17° —
18° Ռ. ու դնել 16° — 17° տաքութիւն ունեցող սենետ-
կում ու թողնել այնտեղ մինչև 12 — 14 ժամ:
 - 3, Եետոյ թթուասերը դնելու է աւելի ցուըտ
տեղ, միայն այնքան պաղ չլինի, որ նա սառի. աւելի
լաւ կլինի որ թթուասերը շուտ սառչելու համար լցուի
մանր ամանների մէջ ու երեսը ծածկել:
 - 4, Պաղցնելը պէտք է տեսի 20 — 24 ժամ:
 - 5, Պաղեցրած թթուասերը լցնելու է մաքուր
բացած տաշտերում, երեսը ծածկելու է մագաղտեսայ

Թղթով ու նրա վրայ էլ գցելու է մաքուր շորտ
Շօն (ТВОРОГЕ): Մինչև 28⁰ Բ. տաքաղրած կաթը
լցնել կաւէ կճուճների մէջ, դնել տաք սենհակում և
թողնել նրան այստեղ այնքան, մինչև որ հաւասարա-
պէս լաւ թթուի, յետոյ դնելու է հաց թխելուց յե-
տոյ փռում (Որուսաց ձեռվ զինած) միայն շատ տաք
չլինի, եփ եկած շուրջ թափել մաղի մէջ. երբ զինուկը
քամուի, լցնել տաշտերում ու ծածկել քիչ ծանրաւուն
իրերով:



արդ պահան է առելու և շաբախ առ այս մասունքուն Ա 192 համար (տուղու) ունի Հ
և Խավանան պահ թար ունի գրամ անձ առաջ առաջ
ապահոված ու պահ առաջ առաջ առաջ առաջ
— մաս պահան ունի առաջ առաջ առաջ առաջ առաջ
պահ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ

ԳՈՅՈՒԹԻՒՆ ԱՒՆԻ



1872 Թ Ի Ւ Ց

ԼԱՐԵ

Կ ո վ կ ա ս ս ե ա ն ա ս ա զ ի ն
Պ Ա Հ Ե Ս

Ամեն տեսակ բանջարեզէնների, անասունների
կերի համար

պտղարմատների, խոտերի, ծաղիկների և ան-
տառային ու պտղատու ծառերի փորձուած, ըն-
տիր և թարմ

Ս Ե Ր Մ Ե Ր :


Մանրամասն պատկերազարդ 1911 թւի վաճա-
ռատան ցանկը կուղարկուի ձրի ամեն դիմողին:

Հասցէն. Տիֆլիս, Միհայլովսկի պրոսպեկտъ
№ 10. Լարշե.

2) Վիկ, (Вика обыкновенная, Vicia sativa)

Այս խոտը սկահող չէ սիրում: Ցուրտ երկրներում
նրան ցանում են կանաչ կերակրելու համար, իսկ
տաք կողմերում ցանում են գլխաւորապէս սերմի հա-
մար: Սա հողի տեսակների մէջ խտրութիւն շատ չէ
անում: Լինի նա աւազախառն, կաւախառն, կաւայ-
կրային և այլն, վիկը միշտ յաջող հուձ է տալիս:

Եթէ ուզում են վիկի սերմը ստանալ, պէտք է
նրան սերմափոխութեան հերթում, երկրորդ անգամ



նկ. № 6, Վիկն. (ոլոն):

պարարտացնելուց յետոյ, ցանել: իսկ եթէ կանաչ խոտ
ստանալու և թարմ կերակրելու նպատակով են ցանե-
լու, պէտք է նրան ցանել խոնաւոտ, ցուրտ տեղե-
րում և թարմ գոմաղպով պարարտացրած արտում:
քանի որ խոտացու վիկը պէտք է վաղ գարնանը ցա-
նել, գրա համար լաւ է թարմ գոմաղպով հէնց արար
աշնանը պարարտացնել: Լաւ է նաև վիկը ցանել գարու
կամ վարսակի հետ խառն՝ հաւասար չափով, իսկ եթէ

արտը պարարտ է, վերցնել 9 մաս վիկ և 3 մաս գարի
խառնել ու ցանել:



Զ. ՇԱԲԴԱՐ, (Ռաբդար, Trifolium resupinatum)

Այս նշանաւոր բոյսը պատկանում է խնձորախոռ-
տի ցեղին. Նա անւանում է նոյնպէս «պարսկական
երեքնուկ»:

Շաբդարը ցանւում է գարնանը, եօնջի նման,
բայց քանի որ նա դիմանում է տօթ ու ցրտերին,
աշնանն էլ կարելի է ցանել: Սա բազմամեայ բոյս է:
Մարտին ցանած շաբդարը մայիսի վերջերին տալիս է
առաջին հունձը, ամառուայ ընթացքում հնձւում է երեք
անգամ: Մի գեսեատինից ստացւում է մօտ 520 փութ
չոր խոր, եօնջից գրեթէ եղկու անգամ շատ:

Միջին-Ասիական տափաստաններում շաբդարի
մշակութիւնը սկսել է ընդհանրանալ:

Շաբդարի ծաղիկներին շատ են սիրահար մեղու-
ները, որովհետեւ նրանց մէջ առատ նեկտար կայ, դր-
համար էլ կատարեալ իրաւամբ դրան անւանում են
մեղքատու շաբդար:

Եղիշերաւոր անասունների համար շաբդարը ա-
խորժահամ և սննդարար կեր է:



ՀՈՒՆԴԱԼԻՐ ԽՈՏԵՐ

Ա. ՄԻՋ ԽՈՏ, (Տիմոֆեևка, Phleum pratense)

Միզխոտը վայրի դրութեամբ բուսնում է արտե-
րի եղերքներում, առուների կողքերին, մարգագետին-
ներում և առհասարակ փոքր ինչ խոնաւ տեղերում.
Արա արմատներից բարձրանում են 3—4 ցողուններ.
նկ. № 7. Միզխոտի ցողունի բարձրութիւնը լինում է
3—4 բառորդ արշին. Նրա արմատները խրձաձկ (պս-
կովատնե) են, հողի մէջ բաւական խոր են մտնում:



նկ. № 7 ՄԻՋ ԽՈՏ

Այս բոյսը սիրում է նոր պատրաստած հող, բայց
երբ արդէն խոր արմատակալում է, կարող է դիմա-

նալ երկարատև երաշտի:

Սաստիկ շողը և շարունակ երաշտ եղանակները
նրան չեն վնասում:

Սիզիսոտի համար յարմար են կաւոտ և կաւա-
խառն հողերը, նոյն իսկ եթէ նըանք լինին փոքր ինչ
ծանր: Այս բոյոը լաւ է աճում նաև սեահողերում,
որպէս և ցածրագիր և մամոտ տեղերում:

Սիզիսոտը եթէ ժամանակին հնձւի, այնէ երբ
հասկը ուղում է երեւալ լինում է քնքոյշ, համեղ և
սննդարար կեր. իսկ ընդհակառակը, եթէ ուշ հնձւի,
շատ կոշտ խոտ է ստացւում և աշանավարի հացա-
բոյսի յարգից էլ ստոր կեր է դառնում:

Լաւ խոտահարքի մի դեսեատինից կարելի է ստա-
նալ 150—200 փ. չոր սիզիսոտ:

Մի դեսեատինից կարելի է 6—20 փութ սնըրմ
ստանալ: Մրա յարդը կոշտ ու անսնդարար է, տաւա-
րի կերի համար քիչ է գործածում:

Սիզիսոտի սերմը ծախտում է փութը 4—6 լուրլի:

Մրան ցանում են թէ գաշտերում և թէ մարգա-
գետիններում, ինչպէս առանձին, նոյնպէս և խառն
ուրիշ խոտասերմերի հետ. մանաւանդ յաճախ նրան
ցանում են երեքնուկի (սիրի-սիրի) հետ. մի դեսեատին
տեղի համար վերցնում են 10, 30 և մինչև անդամ
40 փ. երեքնուկի սերմ և խառնում են 15—30 փ. սիզ-
իսոտի սերմին ու ցանում:

Եթէ մարգագետինը կամ ուրիշ խոտարտը կարծ-
րացած լինի ու դրանից խոտի քերքը նւազւի, պէտք
է այդ արտը աշնանը հերկելով շուռ տալ և ձմեռը
թողնել շերտ շերտ ընկած, զարնանը լաւ ցաքանել ու
վարսակ ցանել, աշտը նորից ցաքանել 36—40 փ.
սիզիսոտ ցանել ու գլանով լաւ գրտնակել: Առաջին
տարին կստացւի վարսակ, կամ եթէ կամենաք, վար-
սակախոտ՝ եթէ խակ խակ հնձէք. իսկ յետոյ, 5 տարի
շարունակ սիզիսոտի հիանալի հունձ կունենաք:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱԶԱԽՈՏԵՐ,

(Райграссы, *Lolium perenne*, *Avena elatior*)

Այս մազախոտերը շատ էլ պէտքական չեն:

Ֆրանսիական մազախոտը (Французскій райг-
рассъ *Avena elatior*) միւս տեսակներից աւելի
ձեռնուու և նպատակայարմար է, այդ պատճառով էլ
նրանցից աւելի շատ է ցանւում ծաղկանոցներում և
խնամւում է իրեւ կանաչ մարգագետին:

ԱՂՈՒԻԾԱԳՈԶ (Лисохвостъ, *Alopecurus pratensis*.)

Աղուէսապոչը շատ նման է սիզիսոտին:



Նկ. № 8 Ա գ ս ի է Ս Ա Վ ս 2:

Աղուէսապոչը սիզիսոտի նման բազմամեայ է, մի-

և սիզիսոտից
երեք շաբթաչափ
առաջ է ծաղ-
կում, հետեաբար
էլ նրանից ա-
ռաջ էլ հնձւու է:

Այս խոտը
բուսնում է վայ-
րի դրութեամբ
էլ՝ խոնաւ տեղե-
րում, անտառնե-
րի ծայրերում,
ջրասոյզ գաշտե-
րում, ձորակնե-
րի լանջերում և
այլն. Ճանապար-
հների և արտերի
կողքերին սակաւ
է պատահում:

այն թէ երկարատև երաշտից կարող է փչանալ. սիրում է կաւային և կաւախառն հող, որոնք խոնաւութիւն լաւ պահպանող են, նոյնպէս և լաւ պարարտացրած հող:

Լաւ է աճում այս խոտը նաև չորացած ճահճառին տեղերում և մամուապատ մազգետիններում:

Աղուէսապոչի սերմը հաւաքելն էլ դժւար է, որովհետեւ շուտ ծաղկում, շուտ էլ հասնում է, որից շատ դժւար է լինում իր ժամանակին հնձել այնպէս, որ սերմը չթափթփէ:

Աղուէսապոչի արմատները թոյլ են ու խոր չեն մտած հողում, դրա համար էլ շատ են ճնշւում ուրիշ խոտերից: Թէև նա սիրում է լաւ մշակւած և բերբի հող, այնու ամենայնիւ առաջին երկու տարիները շատ հունձ չէ տալիս: Այդ պատճառով էլ նրան ցանում են խառն միւս խոտերի հետ, այն է՝ դաշտախոտի, երեքնուկի և այլն:

Եթէ աղուէսապոչը ժամանակին հնձւի, սրա խոտը սիզխոտից գերադաս է. սա լաւ արօտ էլ է տալիս:

Աղուէսապոչի սերմը ստանալու համար պէտք է նրան ցանել առանձին արտում՝ ջոկ, չխառնելով ուրիշ խոտերի հետ:

Մի գեսեատինի վրայ պէտք է ցանել 60—80 ֆ. սերմ:

Մի գեսեատինից, երկու երես հուձից, կարելի է ստանալ մինչև 500 փութ չոր խոտ. իսկ սերմ՝ մինչև 7 փութ:



Դ. ՈՉՆՈՒԿ, (Եշա սբորնա, *Dactylis glomerata*).

Շատ անգամ այս բոյսը տեսնում ենք 2—3 ցողուններից կազմւած առանձին քոլերով, 3—4 քառորդ արշին բարձրութիւնով լաւ մարգագետիններում, անտառամիջի տափերում և այգիներում. նկ. № 9.

Ոզնուկը սիրում է քիչ ստւերոտ տեղեր. ծառերի տակ նրա ցողունը երբեմն մէկ արշինից էլ աւելի է բարձրանում. սա լաւ աճում և շուտ հասնում է, բայց քոլախոտ չի տալիս: Սրա արմատները երբեմն մէկ արշինից աւելի են մտնում խորը գետնի մէջ: Սրա խոտի քանակը և որակը միւս հունդաւոր լաւ խոտերից յետ չի մնայ. բայց որա սերմը միաժամանակ չհասնելու պատճառով, դժւար է ժողովում, դրա համար էլ նրանք լինում են անմաքուր:

Վատ աճող և անյուսալի. բացի այդ, ոզնուկի ցողունը շատ է կոշտանում և այդ պատճառով էլ անասունի կերի համար սակաւ է գործադրուում:

Ինչպէս սիզխոտը, նոյնպէս և ոզնուկը պէտք է մատղաշ ժամանակը հնձել, երբ հասկերը նոր սկսում են երեալ:

Ոզնուկից առատ հունձ ստացւում է ցանելուց 2—3 տարի յետոյ: Սա երաշտի շատ է դիմանում, աճում է լաւ ամեն տեսակ հողերում. մինչև անգամ շատ խիստ ցրտերից էլ չէ վախենում ու անասունների



նկ. № 9. ՈՉՆՈՒԿ:

արորելուց էլ չէ փշանում:

Քանի որ սրա սերմը աղուէսապոչի հունդի նման յուսալի չէ, դրան ջոկ չեն ցանում, այլ խառն՝ ուրիշ խոտերի հետ: Եթբ հարկ լինի շիտկել կամ վերանորոշել մարգագետինը, պէտք է ուրիշ սերմերի հետ խառնել ողնուկի սերմ ու ցանել:

Մի դեսեատինի վրայ սերմացուի համար պէտք է ցանել $2-2\frac{1}{2}$ պուդ, մաքուր ողնուկ:

Ե. ԿՈՐԹՈՒՄ, (Կոստը բեօտնայ, *Bromus inermis*)

Չիմխոտի սերմի տեղ շատ անգամ ծախում են կորթումի սերմը, տեղ տեղ սրան ասում են նաև վարսակախոտ: ոսկեզօծ խրփուկ և այլն. իրան տեսքովը առ շատ է աւարերեւում խսկան չիմից՝ իւր աւելանը՝ ման գլխովը աւելի նման է վայրի խրփուկին կամ վարսակին:

Կորթումը ունի լաւ զարգացող արմատներ, չուրութեան դիիցող և պինդ հողերումն էլ լաւ աճող է. բաձրանում է մինչև $\frac{3}{4}$ արշին, տալիս է լաւ խոտ՝ (դեսեատինը մինչև 500 ֆ.), ջրասոյզ դաշտերում և չալաներում ստացւումէ դեսեատինից մինչև 1000 փութ: Մի դեսեատի հից ստացւում է 20—30 պուդ սերմ, որի ժողովիլը բաւական դժւար է: Դեսեատին հողի վերայ բաւական կլինի ցանել 2—3 փ:


Սա բազմամեայ բոյս է. մի տեղում կարող է հնձւել մինչև 15 տարի շարունակ:

Զ. ՉԻՄ ԽՈՏ, (Պարեյ, *Allium Porrum*).

Չիմ անունը մի քանի տեղերում միևնոյն խոտին չեն տալիս, այլ այգպէս են անուանում շատ տեսակ լայնատերե հունդաւոր խոտերին: Այստեղ մենք չիմ խոտ կանւանենք շատ տեսակ այն խոտերը,

որոնք իրմի վատ բոյսեր, առատութեամբ աճում են արդաւանդ և սևանդ արտերում. № 10 նկարի ձախ կողմում երեսում է նրա ցեղին պատկանող խոտի մի կողմը երեսում է նրա ցեղին պատկանող խոտի մի

տեսակի ցողունի վերին մասը՝ իւր հասկովը, իսկ աջ կողմումը՝ բոյսի ցածի մասը և արմատը: Հողը ցաքանելիս սրա ծլերը միծ քանակ կութեամբ արտի երեսն են գուրս ընկնում. բայց քանի որ ուանց արմատները և արմատածիլերը շատ դիմացկ ևն և դեսունակ են, չեն փշանում, այլ ընդհակառակն, փափուկ ու լաւ պարարտացրած արտերում նրանք



Նկ. № 10 2 ի մ լ թ 8

շատ փարթամանում են: Աճում են նոյնպէս այգիներում, գետեզերըներում, ցանկապատերի մօտերում և այլն: Եթէ մարգագետնի հողը պնդանայ, չիմ խոտը կանհետանայ:

Սրա ցողունը 1—2 արշին է բարձրանում, մատաշաշ հնձւածը լաւ խոտ է լինում. մի դեսեատինից 50—200 փութ է ստացւ ում. ոքանիր պինդ հողեր չէ

սիրում, չարժէ սրան դաշտերումը ցանել, իսկ աւազա-
խառն տափաստաններում աճող վայրի տեսակը ամե-
նալաւ արօտախոտ է: Սրա արմատները շատ կենառ-
նակ լինելով, փափուկ և քիչ խոնաւ հողում արձակում
են շատ ընծիւղներ: Չիմը առհասարակ չեն ցանում,
նա ինքնաբոյս է և դրա համար էլ նրա սերմը հազւա-
գիւտ է:

Ով որ ուզենայ չիմխոտ ցանել, շատ հեշտութիւ-
նով կարող է ինքը նրան սերու ժողովել: մի դեսեա-
տինի վրայ կարելի է ցանել 4 փ. զուտ չիմխոտ: Չորա-
ւուն տեղերում լաւ է նրան ցանել խառն—ուրիշ խո-
տերի հետ. առաջին տարին նա ուրիշ խոտերից չի
ճնշվի, ու ինչպէս երաշտի շաւ գիմացող, լաւ հունձ
կտայ: Մի քանի տարի չներկւած խոպան արտի վրայ
առաջին երկու տարիները կամեն ժանդալ խոտեր, իսկ
սկսած երրորդ տարուց դուրս կգայ չիմը,—որը տա-
րին 3—4 անգամ կարող է հնձւել: Ուժասպառ արտե-
րում, հէնց հունձից յետոյ, չիմխոտ է դուրս գալիս.
իսկ արտի վերնաշերտը պնդանալիս նա հետզհետէ նոս-
րանում և վերջապէս բոլորովին կորչում— խեղտուում է
միւս խոտերից:

Եթէ կամենաք նրան վերաբուսցնել, պէտք է ար-
տը 3—4 վերջոկ խորութեամբ հերկել, սրանով ուրիշ
խոտերը կը ոչնչանան, իսկ չիմը կը զարդանայ: Աշնա-
ցանի հունձից յետոյ սա աւելի շուտ և լաւ է աճում
քան թէ զարնացանի հունձից յետոյ:

Արտը լաւ ցանելուց, չութով կրկնահերկելուց և
ոչխարի հօտի արածացներուց չիմ խոտը փչանում է:
թէ պէտք լինի սրան ոչնչացնել, պէտք է նախ
թողնել ոչխարների հօտը նրա վրայ արածելու, յետոյ,
զարնանը հերկելով շուր տալ հողը և իսկոյն զարնա-
վարը ցանել ցորեն, կամ աւելի լաւ կլինի սև ցորեն
(гречչա), որը շատ լաւ խեղտում է միւս խոտերին,
մանաւանդ չիմխոտին. իսկական չիմխոտը սեւահող

գտնատերի յատուկ բոյս է, բայց նրան կարելի է ցանել
նաև ուրիշ հողերումն էլ. յաջողութեամբ առաջ է գա-
լիս նա նաև ցուրտ երկիրներում:

Ե. ԴԱՇՑԱԽՈՑ, (*Rox pratensis*).

Սու ամենասովորական և ամենից շատ տարած-
ւած խոտերից մէկն է, աճում է խոնաւոտ և արգա-
ւանդ հողերում, մարգագետիններում, այգիներում,
բանջարանոցներում, նոյնպէս և չորային տեղերում:



նկ. № 11 Դ Ա Շ Ց Ա Խ Ո Ց

Սրա մեծ ու փոքր արմատները, արմատամօտի տերե-
մանաւանդ չիմխոտին. իսկական չիմխոտը սեւահող

դունի վերի մասը իր հասկովը ցայդ է տրւած № 11
նկարում:

Դաշտախոտի բազմացողուն քոլերը 1—3 քառորդ
արշին բարձրութիւնով կարելի է ամեն տեղ տեսնել.
արգաւանդ հողերում նա լաւ է զարգանում, իսկ չորա-
յին և նւազ հողերում՝ թոյլ է լինում: Արգաւանդ հո-
ղերում նա լաւ նստկան խոտ է լինում, ուստի
սրան պէտք է ցանել բարձրադիր խոտերի հետ խառն:

Սա գարնանը շուտ է բարձրանում և շուտ էլ
ծաղկում է, այնպէս որ խոտհարքի ժամանակ նա ար-
դէն բոլորովին համած է լինում: Բայց, քանի որ սրա
սերմն էլ միաժամանակ չէ հասնում, նրան ժողովել ու
ժողովածն էլ անմաքուր, վատ աճող, հետեաբար և
թանկագին է (12—13 ր. փութը):

Զուտ սրա սերմը սերմացուի համար ցանելու մի-
գեսեատինի վրայ գնում է 50—80 ֆունտ:

Մի գեսեատինից կսացւի 180—300 ֆութ չոր-
խոտ:

Բ. ՍՈՎՈՐԱԿԱՆ ԴԱՇՏԱԽՈՒՏ, (Մյալու օ բակնօեն հայ, Rosa trivialis).

Սրա դաշտախոտի մի ուրիշ տեսակն է, սիրում է
միայն խոնաւոտ տեղեր: Չորային դաշտերումը լաւ չէ
աճում: Դաշտախոտից սա ուշ է ծաղկում. դրա հաս-
մար էլ կարելի է լինում ժամանակին լաւ խոտ
ստանալ: Այս բոյսը լինելով ցածրադիր, թիտ կեր-
պով ծածկում է հողի երեսը, բայց դաշտախոտի
նման շատ զիմացկուն չէ: Սա ցանւում է ցածրադիրը:
Խոնաւ կամ այնպիսի տեղերում, ուր հնար չէ լինում

Ե.

ՄԵՂԻԵԲՈՒԾՈՒԹԻՒՆ

Մեղուները եւ նրանց կծանքը:

Մեղւաբուծութիւնը շատ հետաքրքիր և դուրեկան
զբաղմունք է, բացի դուրեկան լինելուց նա միենոյն
ժամանակը շատ մատչելի և օգտաւէտ պարագմունք
է: Մկրբում՝ գործը սկսելիս, նա չի պահանջում ոչ
մեծ գրամագլուխ և ոչ էլ մեծ քանակութեանը հող-
մեղւանոցը բռնելով տեղի անշան աարածութիւն,
մեղուն տէր է դասնում ամբողջ շրջակայքի հարիւրա-
ւոր վերստերի, առանց վնասելու այդ շրջակայքի տի-
րոջ շահերը: Հաւաքում է ծաղիկներից այն քաղցը
հիւթը, ուրը կոչւում է նեկտար և որը առանց մեղու-
ների կորած կը լինի մարդկութեան համար և այդ
անթիւ այցելութիւններով միատեսակ ծաղիկներին, նա
կատարում է մի մեծ գործ, այն է, պտղատու ծառերի
և բոյսերի բեղմնաւորման գործը՝ տանելով մի ծաղկի
արական փոշին և ցցելով նոյն ծագկի վրայ գտնող,
կամ նոյն տեսակի ուրիշ ցողունի գտնուղ իգական
զոր ծարանի մէջ:

Մեղւաբուծութեամբ կարող են պարագւել ամեն
տեղ, ուր կայ բուսականութիւն և ամենքը: հարկաւոր
է միայն մօտիկ ծանօթանալ մեղուների կեանքի հետ,
առանց որին անհնարին է կանոնաւոր մելապահու-
թիւնը՝ հետեապէս միշտ և մեծ քանակութեամբ մեղը
ստանալը: Ոչ մի գործ այնքան ակետուրաս—ճշտապահ
լինել չի պահանջում, որքան մեղւապահութիւնը: Ժա-
մանակին մեղւի ընտանիքին պահանջող օգնութիւն

չհասցնելը, անվերադառնալի կորուստ է. կորցրած օրւայ բերքը այլ ևս չէք վերադարձնիլ, իսկ մեղրաբերքի օրերը ամբողջ տարւայ ընթացքում լինում են 10—40 օր:

Առանց սովորելու միորեիցէ օրինակելի մեղւանոցում անկարելի է սկսել գործը, մասնաւանդ մեծ դիրքով, իսկ այդպիսի օրինակելի մեղւանոցներ մենք գըեթէ ամեն մի շրջանում էլ ունենք:

Մեզ մօտ՝ Կովկասում, կայ երկու տեսակ մեղուներ, մոխրագոյն և դեղին: Այդ երկու տեսակներն էլ շատ բեղմաւոր են, խաղաղ բնաւորութիւն ունեն, մեղը հաւաքելում մեծ ընդունակութիւն են ցոյց տալիս, լաւ պաշտանում են փեթակը յարձակութմերից և միենոյն ժամանակը դիմացկուն են թէ ցրտին և թէ տարբին: Շնորհիւ այս մեծ առաւելութիւններին, սըանք աչքի են ընկնում ոչ միայն Ռուսաստանում, այլ Եւրոպայում, Ամերիկայում և վերջին ժամանակներս նոյն իսկ եապօնիայում և այսօր մենք տեսնում ենք, որ գործնական Ամերիկացիք, որ մի ժամանակ գրաւուած էին իտալական տեսակի մեղուներով, այժմ ամբողջ ուշադրութիւնը դարձել են դէպի մեր մեղուները, տանելով մեղանից ամեն տարի մեծ քանակութեամբ մեղւի մայրեր:

Մեղուները պատկանում են միջատների դասակարգին և իրանց թաղանթաւոր թմերի պատճառով կոչւում են թաղանթաթեւ—խայթոցաւորներ:

